

ՍԴՅԿ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Սոցիալ Դեմոկրատ շնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը կ'ողջունէ Գերմանիոյ խորհրդարանին կողմէ Հայոց Ցեղասպանութեան փաստը նախապատճառով քննարկող անդամներուն ներկայացուցած բեկբերը եւ դատապարտումը հայութեան դէմ գործուած ցեղասպանութեան լուրջագոյն ապացոյցն են, այն վաղ գիտակցութեան, որուն հիմքով 20-րդ դարու առաջին Ցեղասպանութիւնը նախապատճառով Գերմանիոյ մէջ:

Հայ ժողովուրդին դէմ գործուած Ցեղասպանութեան փաստին ընդունումը տասնեակ երկիրներու խորհրդարաններու կողմէ այսօր Պերլինի Պունտսթագայի կամարներուն տակ նոր վարչակազմութիւն կը ստանայ: Ու հակառակ Անգարայի իրականացուցած նմաններուն Գերմանիոյ խորհրդարանականները փառաբանութեամբ դիմակայեցին եւ յանուն արդարութեան նախապատճառով անուրանալի փաստը:

Պատմութեան նիշը գնահատականը կատարելու իր նիգի մէջ Գերմանիոյ խորհրդարանը նաեւ լաւ պէտք է ընէ 1914-էն մինչեւ 1918 երկարած եւ հայ ժողովուրդի համար խիստ նակատագրական համարուող ժամանակահատուածը: Ու այդ շրջանին էր նաեւ, որ Կայսերական Գերմանիան Օսմանեան Կայսրութեան հետ իր կնքած դաշինքի հանգամանքներէն ելլելով անտարբեր եւ գրեթէ կոյր ձեւացու մեր ժողովուրդին դէմ գործուած ամէնէն դաժան բարբարոսութիւններուն դիմաց:

Լիայոյս ենք, որ մեզման մօտեցումներ յաւելնելու խնայելու կը հանդիսանան, որպէսզի նախապատճառով ամրագրուած համարողկային մեր ցար մուտք գործէ հատուցման փուլ:

Կը հաւատանք, թէ միայն հատուցման նախապատճառով է, որ տառապանքներու մէջէն անցած մեր ժողովուրդը իր արդար պահանջներուն պիտի հասնի: Այդ նիգիներուն մէջ կարեւոր ու նկատելի տեղ կը գրաւէ Գերմանիոյ խորհրդարանին այս արդար մօտեցումը, որուն համար ազգովին մենք ներառուապարտ ենք:

Ս.Գ.ՀՆՉԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

101 Տարի Ուշացուծով Գերմանիա Գանչցաւ Հայոց Ցեղասպանութիւնը Ու Իր Պատասխանատուութիւնը

101 տարուայ ուշացուծով, Գերմանիա Յունիս 2-ին պաշտօնապէս ճանչցաւ Հայոց ցեղասպանութեան փաստը, նաեւ մասամբ ընդունելով այդ օրուայ գերմանական իշխանութիւններու պատասխանատուութիւնը:

Գերմանիոյ խորհրդարանի՝ Պունտսթագայի անդամները գրեթէ միաձայնութեամբ՝ թեր քուէարկեցին Ցեղասպանութիւնը ընդունող բանաձեւին: Միայն մէկ երեսփոխան դէմ արտայայտուեցաւ, մէկ այլ ուրիշ, մնաց ձեռնպահ:

«Պունտսթագայը կը խոնարհի 101 տարի առաջ Օսմանեան կայսրութեան մէջ հարկադիր տեղահանութեան եւ ջարդերու ենթարկուած հայերու եւ քրիստոնեայ միւս փոքրամասնութիւններուն առջեւ: Խորհրդարանը կը դատապարտէ երիտթուրքերու կառավարութեան արարքը: Պունտսթագայը կը ցաւի Գերմանիոյ իշխանութիւններու դերին համար՝ որպէս Օսմանեան կայսրութեան դաշնակից, որ չնայած քաղաքական գործիչներու եւ միսիոնարներու ստացած տեղեկութիւններուն, ոչինչ ձեռնարկեց Չմարդկութեան դէմ այդ յանցագործութիւնը կանխելու համար: Խորհրդարանը կ'ընդունի Գերմանիոյ պատմական պատասխանատուութիւնը», ըստ էության:



Գերմանիոյ խորհրդարանի նիստի ընթացքին խումբ մը հայեր պատշգամբէն կը հետեւին ֆուէարկութեան՝ շնորհակալութեամբ խօսքեր պարգած

է բանաձեւին մէջ:

Գերմանիոյ խորհրդարանը նաեւ կառավարութեան կողմէ նպատակը հայերու եւ թուրքերու հաշտեցման ջանքերուն, ինքնաշարժութեան կողմին՝ առերեսուել սեփական պատմութեան հետ, քաջալերել Հայաստան-թուրքի միջպետական յարաբերութիւններու կարգաւորման հոլովոյթը, նա-

եւ աջակցիլ թուրքիոյ մէջ հայկական յուշարձաններու պահպանման: Քննարկումներու ընթացքին, Գերմանիոյ խորհրդարանի նախագահ Նորպրիթ Լամերթ յայտարարեց, որ պատմութեան, անցեալի ազնիւ վերանայումը հաշտեցումի եւ մերձեցման ուղի է: Անոր հա-

Շարք էջ 5

Մեծ Շուքով Նշուեցաւ «Մասիս» Շարաքաթերթի 35-Ամեակը Յովհաննէս Հանգեան, Նազարէթ Գեւորեան Եւ Արշակ Գազանճեան Ի Պատուի

Շարաք, Յունիս 4-ի երեկոյեան, Իրանահայ Միութեան շքեղ կեդրոնի սրահէն ներս տեղի ունեցած ճաշկերպութի մը ընթացքին, մեծ շուքով նշուեցաւ «Մասիս» շարաքաթերթի հիմնադրութեան 35-ամեակը ու այս առթիւ պատուոյ գիրքը յանձնուեցան թերթի գոյատեւման իրենց նպաստը բերած՝ Պր. Յովհաննէս Հանգեանին (յետ մահու), Տիար Նազարէթ Գեւորեանին եւ Տօքթ. Արշակ Գազանճեանին:

Երեկոյին ներկայ էին Արևմտեան Թեմի առաջնորդ Յովնան Արք. Տէրտէրեան, Հայաստանի Հանրապետութեան հիւպատոս Պր. Վալերի Մկրտումեան եւ հիւպատոսի օգնական Ռազմիկ Ստեփանեան, Արևմտեան Ամերիկայի Թեմական Խորհուրդի ատենապետ Իրաւաբան Յովսէփ Կանիմեան, Վաչէ Արք. Յովսէփեան, քահանայ հայրեր՝ դոկտ. Զաւէն Աւգ. քահանայ Արզումանեան, Տ. Սարգիս Աւգ. քահանայ Բէթոյեան, Տ. Վազգէն քահանայ Մովսէսեան:

Ներկայ էին նաեւ ՍԴՀԿ Կեդրոնական վարչութեան անդամներ՝ Վազգէն Խոտանեան, Վազգէն Գալթաճեան, Սեդրակ Աճէմեան եւ Խաչիկ Քէշիշեան:

Հայ մամուլէն ներկայ էին «Նոր Օր» շարաքաթերթի խմբագ-



«Մասիս» շարաքաթերթի 35-ամեակին առթիւ առթիւ պատուոյ գիրքերու յանձնման արարողութեան մասնակիցները

րական կազմի անդամ Պրն. Խաչիկ Ճանոյեան, «Armenian Observer» թերթի հրատարակիչ եւ խմբագիր Տօքթ. Օշին Քէշիշեան, «Քաջ Նազարի» խմբագիր Պր. Յովհաննէս Պալեան:

Երեկոյի հանդիսավարութիւնը կատարեց Նոր Սերունդ Մշակութային Միութեան ատենապետ եւ «Մասիս» խմբագրական կազմի անդամ Յարութ Տէր-Դաւիթեան, որ իր բացման խօսքին մէջ անդրադաձաւ թերթի 35- ամեակ

ուղին, առաքելութեան եւ ընդհանրապէս հայ մամուլի դերին ու կարեւորութեան:

Բացման խօսքէն ետք կատարուեցաւ Պատուոյ Գիրքերու յանձնում՝ երեք հայրերին, որոնց աջակցութիւնը մեծ դեր ունեցած է «Մասիս» շարաքաթերթի գոյատեւման ու զարգացման գործին մէջ:

Յետ մահու մեծարանքի արժանացաւ «Մասիս» խմբագրա-

Շարք էջ 7

ՐԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ի՞նչ Անուններ Եր Ուզում Երկրորդ Նախագահը Յովիկ Աբրահամեանից

ԱՐԱՄ ԱՄԱՏՈՒՆԻ

Անցեալ շաբաթավերջին հրատարակուեց ապրիլեան պատերազմի եւ դրանից յետոյ ստեղծուած իրավիճակի վերաբերեալ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարեանի հարցազրույցը: Հարցազրույցում բացի պատերազմական եւ դարաբաղեան կարգաւորման թեմաներից, բացի արտաքին յարաբերութիւններէ, Քոչարեանն անդրադարձ է կատարել նաեւ կառավարութեան գործունէութեանը, որոտեղ առկայ են բաւական ուշագրաւ ակնարկներ:

Մասնաւորապէս, Ռոբերտ Քոչարեանը անդրադառնալով հարցին, թէ արդեօ՞ք իրատեսական է, որ կառավարութիւնը կը պայքարի կոռուպցիայի դէմ՝ տալիս է հետաքրքրական պատասխան. «Դա այն է, ինչը քայքայում է երկիրը, եւ անհասկանալի է, թէ ո՞վ է խանգարել կամ խանգարում իշխանութիւններին՝ լուծել այդ խնդիրները: Ճիշդ խօսքեր հասարակութիւնը լիովին լսել է, այնքան, որ մարդկանց մօտ, ցաւօք, լաւատեսական ակնկալիքներ չկան կառավարութեան մտադրութիւններէ: Այսօր ոչ թէ ճառեր են պէտք, այլ նպատակաւորողութեան եւ գրագէտ քայլեր: Կ'ապրենք, կը տեսնենք»:

Մի կողմ թողնենք զաւելուել, երբ կոռուպցիայի քայքայիչ բնույթի մասին խօսում են գործիչներ, որոնք չափազանց մեծ դերակատարում են ունեցել Հայաստանում կոռուպցիան համակարգի ձեւա-

ւորման եւ կատարելագործման հարցում: Վերջին հաշուով, այն համակարգը, որ կայ այժմ՝ ընդամէնը կոսմետիկ փոփոխութիւնների է ենթարկուել մինչեւ 2008 թուականը եղած ժամանակի համեմատ, իսկ Հայաստանի հասարակութիւնը 2003, 2004 եւ յետագայ թուերին Հայաստանում առկայ կոռուպցիայի, ամենաթողութեան, հովանաւորչութեան եւ այլ արատների դէմ պայքարում էր ոչ պակաս աշխուժ, քան այսօր: Պարզապէս այդ պայքարի «Ֆէյսպուքեան ռետրանսլացիան» տեսնելիպէս հնարաւոր չէր:

Տուեալ պարագայում, սակայն, անգամ 2008 թուականից այս կողմ ծնուած երեխային էլ հասկանալի է, որ կոռուպցիան ընդամէնը մի թեմա է, որ Հայաստանի իշխող համակարգը ակտիւօրէն մէջտեղ է բերել ընդամէնը ինֆորմացիոն կոմունիկացիաների գարգացմանը համարժէք արձագանքելու համար, նաեւ որոշակի աշխարհաքաղաքական անհրաժեշտութիւնից ելնելով: Իսկ իրականում, իշխանութեան համար խնդիրը ընդամէնը ռեսուրսների տնօրինման մշտական, առօրեայ հարցն է, որն այսօր առաւել զգալուն է դարձել հենց այդ տեղեկատուական տեսնորդիաների զարգացումով: Իհարկէ, իրավիճակը ստիպում է անել քայլեր, որոնք չէին կատարուում նախկինում:

Իհարկէ, իրավիճակը ստիպում է նաեւ ռեսուրսների սղման արդիւնքում, որը պայմանաւորուած է

մի շարք ներքին ու արտաքին օբիեկտիւ եւ սուբեկտիւ հանգամանքներով: Դրանց անդրադառնում ենք պարբերաբար, տարբեր առիթներով, եւ առիթ թերեւս էլի կը լինի: Տուեալ դէպքում իրավիճակն ուշագրաւ է նրանով, որ Ռոբերտ Քոչարեանը կարծես թէ Յովիկ Աբրահամեանի առաջ դնում է որոշակի պայման, որը բաւարարելու դէպքում կարող է աջակցել նրան: Մասնաւորապէս, Քոչարեանի անդրադարձում ուշագրաւ է հարցը, թէ «ո՞վ է խանգարում» կոռուպցիայի դէմ պայքարին: Քոչարեանն ասում է, թէ ճառերի փոխարէն պէտք են նպատակաւորողութեան, կոնկրետ գործեր: Ինքնին հասկանալի է, որ երկրորդ նախագահը լաւ է պատկերացնում այդ գործերի անհնարինութիւնը, քանի որ համակարգի համար դա կը նշանակի ինքնասպանութիւն:

Քոչարեանն ամենայն հաւանականութեամբ Աբրահամեանին անում է այլ ակնարկ. նա առաջարկում է ընդհանուր ճառերի փոխարէն առաւել ակտիւ լինել «կոռուպցիայի դէմ պայքարի» հարցում խանգարողներին մատնացոյց անելու ուղղութեամբ:

Իսկ ո՞վ կարող է խանգարել Յովիկ Աբրահամեանին, եթէ նա, իհարկէ, ուզում է իսկապէս պայքարել՝ ենթադրենք: Բնականաբար, նա, որն ունի Աբրահամեանից աւելի մեծ իշխանութիւն: Բնականաբար, դա Սերժ Սարգսեանն է, եւ մարդիկ, ովքեր իշխանութեան մէջ տնօրինում են ազդեցիկ լծակներ ու ենթարկում են

նրան, հանդիսանում են նրա վստահելի շրջապատը: Օրինակ՝ դա կարող են լինել իրաւապահ կամ ուժային համակարգի կառուցիչների դեկավարներ:

Ըստ այդմ՝ եթէ որեւէ մէկը «խանգարում» է Յովիկ Աբրահամեանին, ուրեմն դա Սերժ Սարգսեանը կամ նրա վստահութիւնը վայելող ուժային որեւէ պաշտօնէն է: Փաստօրէն, երկրորդ նախագահը Յովիկ Աբրահամեանին, ըստ երեւոյթին, ակնարկում է, որ եթէ նա առաւել ակտիւ լինի «խանգարողների» դէմ պայքարում, աւելի ակտիւ պայքարի իշխանական համակարգում իր դիրքերի համար, կարող է վայելել երկրորդ նախագահի աջակցութիւնը: Ըստ էութեան, Ռոբերտ Քոչարեանը Յովիկ Աբրահամեանին մղում է Սերժ Սարգսեանի դէմ:

Սա, իհարկէ, կարող է լինել պարզապէս ծուղակ Աբրահամեանի համար, որին կը չաջորդի արդէն Սարգսեանի հարուածը: Աբրահամեանը հագիւ թէ գնայ դրան, քաղաքականութեան մէջ նա գտնէ այդչափ խելք ունի: Բայց այդ դէպքում ասացում է, որ Յովիկ Աբրահամեանը գրկում է ներքին խանական ազդեցիկ աջակցութեան հետնակարից եւ ընդհանրապէս մնում է մենակ: Բայց հետաքրքրական է, թէ ինչո՞ւ է Ռոբերտ Քոչարեանը Յովիկ Աբրահամեանին ակնարկում աջակցութեան հաւանականութեան մասին: Դա նշանակուած է, որ Քոչարեանն ինքը առաջիկա խորհրդարանի ընտրութեանը չունի որեւէ լուրջ հաւանականութիւն:

Ի դէպ, այդ առումով նրա հարցազրույցն ընդհանուր առմամբ ուշագրաւ էր հենց նրանով, որ թերեւս ամենաքիչ հաւանականութեանը էր Քոչարեանի յետպաշտօնէական ամբողջ շրջանից յետոյ:
«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Գերմանիայի Հզօր Հարուածը Թուրքերին

ԱՐԱ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

95 տարի առաջ՝ Յունիսի 2-ին, գերմանական դատարանը անմեղ ճանաչեց Սողոմոն Թեհլերեանին: 2016-ի Յունիսի 2-ին գերմանական պառլամենտը մէկ դէմ, մէկ ձեռնպահ ձայներով հայերիս Յեղասպանութիւնը պաշտօնապէս ճանաչեց որպէս Գենոցիդ:

Մի կողմ թողնենք այս երկու իրադարձութիւնները կապող ակնյայտօրէն ներդրուած գուգահեռ սիմուլիզմը եւ փորձենք գնահատել կատարուածը հայկական կոնստիտուցիոնալ զուգորդութեան:

Այն, որ գերմանացիների այս քայլը մեզ հետ չի կապուած, քննարկելիք էլ չէ: Մենք շատ լաւ գիտենք, որ Գենոցիդի հարցը միջազգային խաղացողների ձեռքին խաղաքարտ է, եթէ այն օրակարգում է, բայց դրա վերաբերեալ դեռ որոշում կայացուած չէ:

Այն պահից սկսած, երբ կայացուում է որոշումը, արդէն այն խաղաքարտ չէ, լծակ չէ, այլ տուեալ երկրի յատակ դիրքորոշումն է, որն իր հետեւանքներն է ունենալու թէ Թուրքիայի հետ երկկողմանի, եւ թէ միջազգային բազմակողմ յարաբերութիւններում:

Եթէ գերմանացիք վերացրեցին այդ լծակը թուրքերի հետ յարաբերութիւններում, դա նշանակում է միայն մէկ բան, որ նրանք ինչ-ինչ դրդապատճառներից ելնելով որոշել են հրաժարուել խաղաքարտից եւ անցնել կայուն դիրքորոշման ոչ միայն հանդէպ Թուրքիան, այլեւ ՆԱՏՕ-ն եւ առնուազն Իսրայէլը:

Իհարկէ, անհնար է գերմանական իշխանութիւնների եւ պառլամենտականների դիրքերից ամբողջովին հասկանալ կատարուածը: Բայց ակնյայտօրէն բխող հետեւանքների դաշտի նրբութիւններից կարելի է եզրակացութիւնների գալ, թէ ինչ մասշտաբների է այս որոշումն իրականում:

Նախ քննարկենք մակերեսին երեւցողը:

Ա. Այս որոշումը հարուած էր ցեղասպանութիւնների շարքում Հոլոքոստի գերիշխող դիրքերին: Գերմանացիների եւ հրեաների համար միջազգային դիրքաւորման առումով այս որոշումը շրջադարձային է՝ գերմանացիներն իրենց վրայից թօթափում են եզակի «հրէներդ-մարդատեացներ» լինելու բեռը, հրեաներն էլ զրկուում են եզակի «տիեզերական գոհի» կերպարից:

Բ. Գերմանացիների մեղքի մասնակի նսեմացումը իրացուելու է թուրքերի վրայ ահռելի, նոր միջազգային մեղքի բարդման շնորհիւ:

Իրականում սա շատ ծանր հարուած էր Թուրքիային: Ոչ մի երկրի, նոյնիսկ բազմաթիւ արեւմտեան երկրների կողմից Գենոցիդի ճանաչումն այն ուժը չէր ունենալու, որքան գերմանացիներին է, որովհետեւ Գերմանիան Հոլոքոստի միայնակ պատասխանատուն է:

Եթէ այդ երկիրը յանդգնում է իր պառլամենտի մակարդակով, զրեթէ միաձայն որոշել, որ մասշտաբներով համանման այլ Գենոցիդ էլ է եղել՝ Թուրքիայի կողմից, ապա այն մի կողմից մարտահրա-

ւէր է Թուրքիային, իսկ միւս առումներով էլ մարտահրաւէր է Գենոցիդը չընդունած այլ երկրներին: Այսուհետ որեւէ գերտէրութիւն կամ պէտք է ընդունի Գենոցիդը, կամ էլ պարզաբանումներ տայ միջազգային հանրութեանը՝ իր ու Գերմանիայի դիրքորոշումների տարբերութեան մասով:

Ակնյայտ է, որ մինչեւ հիմա Գերմանիային գապաշապիկ էր հազցուած մի կողմից հրեաների, իսկ միւս կողմերից էլ ՆԱՏՕ-ի ու միջազգային խաղացողների կողմից, հայերի գենոցիդի հարցում «չծաւալուելու»: Նշուած երկրների որեւէ կերպ ձեռնտու չէին ոչ միայն Գենոցիդի ճանաչմամբ Թուրքիայի նսեմացումը, այլեւ Գերմանիայի ներկայ հզօրացման տեմպերը, եւ աճող սուվերենութիւնը, իսկ հրեաներին էլ՝ իրենց գործիքային դաշտում ահռելի դեֆեկտի առաջացումը:

Գ. Մինչեւ վերջերս գերմանացիք չէին յանդգնում գնալ այդ քայլին, բայց Յունիսի 2-ին գնացին. ինչու՞:

Իմ կարծիքը հետեւեալն է:

Նախ նրանք համոզուեցին, որ էրզրդանի մշտական առեւտուրների ու շանտաժների տակից անհնար է դուրս գալ դիւանագիտական փոքր քայլերով, քանի որ թուրքերի ձեռքին Գերմանիայի հանդէպ կան երկու հզօր լծակներ:

Առաջինը դա ներգերմանական թուրքական ահռելի գանդուածն է, որը մօտ ապագայում



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
 ՎԱՅԵ ԱՁԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$100.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$250.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մնացականեան - Բարաեան Բանալիճը Սուր Ձարգացումներ է Ստանում

Լեոնային Ղարաբաղի Նախկին ու ներկայիս նախարարների միջև հեռակայ ծառայող բանալիճը բաւական սուր զարգացումներ է ստանում:

Յիշեցնենք՝ աւելի վաղ տուած հարցազրոյցում նախկին նախարար Սամուէլ Բարաեանը ասել էր, թէ Ապրիլի սկզբին տեղի ունեցած ռազմական գործողութիւնների ժամանակ հայկական կողմը սխալներ է թույլ տուել, ինչի արդիւնքում տարածքներ է կորցրել:

ԼՂՀ պաշտպանութեան նախարար Լեւոն Մնացականեանը չի հերքում տարածքներ կորցրել են, բայց Բարաեանին յորդորում է «չիշողութեանը զուտ տալ» եւ վերջիշեւ, թէ ինչպէս է ժամանակին հողեր յանձնել:

«Անտարբերութիւնն էր, թէ մերոնք թուլացրել էին դիրքերը, թէ ինչ պատճառներ ա եղել՝ դա արդէն նախարարութիւնը պէտք ա հետաքննի ու հասկանայ՝ ինչ ա կատարուել իրականութեան: Փաստը նա ա, որ մի կէս ժամուայ մէջ էր ամբողջ դիրքերը յանձնուել է: Դրանից յետոյ փորձել ենք վերականգնենք՝ յարձակումներով, որն էլ բերել ա էդ կորուստներին», - յայտարարել էր Բարաեանը:

«Կ'առաջարկէի վերլուծեն 94 թուականի Յունուար-Փետրուար ամիսներին տեղի ունեցածները, երբ որ նոյն հարաւային ուղղութեամբ մէկ օրուայ ընթացքում հակառակորդի ճնշման տակ 21 կիլոմետրից աւել տարածք մէկ օրում յանձնուել ա: Ով ա եղել էն ժամանակ հրամանատարը՝ ձեր կողմից նշուած անձնաւորութիւնը», - հակադարձում է Լեւոն Մնացականեանը:

Նախարարը նաեւ հակադարձում է Սամուէլ Բարաեանի այն



ԼՂՀ պաշտպանութեան նախարար Լեւոն Մնացականեան

յայտարարութեանը, թէ Ապրիլի սկզբին տեղի ունեցածը ոչ թէ պատերազմ էր, այլ դիվերսիոն գործողութիւն: Լեւոն Մնացականեանը, հիմնաւորելու համար, որ Ղարաբաղի զինուած ուժերը գործ են ունեցել պատերազմի հետ, նշում է, թէ հակառակորդը ամբողջ շփման գծի երկայնքով մինչեւ 200 կիլոմետր հատուածով կիրառել է յատուկ նշանակութեան 1000-ից աւելի ջոկատայիններ, 200 տանկեր, հրետանային համակարգեր, հարուածային անօդաչու թռչող սարքեր: Աւելին, ապրիլեան երեք օրերի ընթացքում հակառակորդը արձակել է 20 հազար արկ, մինչդեռ 1992-94 թուականների պատերազմի ժամանակ, այսինքն՝ երեք տարիների ընթացքում, դրանք չեն հասել 100 հազարի:

Անդրադառնալով արդէն Ստեփանակերտի յուշահամալիրում անցած Կիրակի Սամուէլ Բարաեանի ելոյթին՝ Լեոնային Ղարաբաղի պաշտպանութեան նախարարը բաւական կոշտ յայտարարութիւն է անում՝ ասելով, թէ Բարաեանի արածը դիւերսիա է Ղարաբաղի դէմ:

«Դա Յարիր Զէ Ժողովրդավարական Պետութեանը». Ալ. Արզումանեանը Հայկ Խանութեանին Ծեծի Ենթարկելու Մասին

«Շատ դատապարտելի է, պէտք է անյապաղ քայլեր ձեռնարկուեն, որ բոլոր մեղաւորները պատժուեն, դա յարիր չէ ժողովրդավարական պետութեանը»: Այս մասին, Յունիսի 7-ին, Ազգային ժողովում լրագրողների հետ գրոյցի ժամանակ նշել է Աժ պատգամաւոր Ալեքսանդր Արզումանեանը: Իստեղով ԼՂՀ պատգամաւոր Հայկ Խանութեանին ծեծի ենթարկելու դէպքի մասին:



Լեոնային Ղարաբաղի Խորհրդարանի անդամ Հայկ Խանութեանին ծեծի ենթարկուել է ետք

պէս կը ձեւաւորուի ընդդիմութիւնը»:

Յունիսի 6-ին առեւանգել եւ դաժան ծեծի էին ենթարկել ԼՂՀ Աժ «Վերածնունդ» խմբակցութեան պատգամաւոր Հայկ Խանութեանին:

Նա աւելի ուշ յայտարարել է, որ իրեն ծեծողներից 7-ին ճանաչում է: Նա նշել է, որ ծեծելուց, ջարդելուց յետոյ, թուղթ են թելադրել, որը գրել եւ ստորագրել է, որ «երեկուայ դէպքերը սխալ են եղել»:

Հայկ Խանութեանին առեւանգելու փաստով քրէական գործ է յարուցուել:

Արծրուն Յովհաննիսեան. «Մենք Մոռացել ենք, Որ Բանակը Յաղթել է»

ՀՀ պաշտպանութեան նախարարութեան խօսնակ Արծրուն Յովհաննիսեանի խօսքով, վերջին օրերին Ջինուած ուժերի բարձրաստիճան պաշտօնեաների ձերբակալութիւնները ապրիլեան քառօրեայ պատերազմի հետ ուղիղ կապ չունեն:

«Պաշտպանութեան նախարարութեան ներքին աուդիտի, ստուգումների, վերահսկողութեան մեխանիզմների շնորհիւ վերջին 6-7 տարիների ընթացքում պաշտպանութեան նախարարի կողմից բանակից ազատուել են մօտաւորապէս նոյն օղակի՝ փոխգնդապետ, գնդապետ օղակի, նուազագոյնը 130 պաշտօնեայ, որից շուրջ կէսը ենթարկուել է քրէական պատժի: Եւ դրանք բոլորն էլ լուսաբանուել են», - «Կիրակնօրեայ վերլուծական թամրագեանի հետ» հաղորդման եթերում յայտարարեց Յովհաննիսեանը:

Անցած շաբաթ կալանաւորուեցին Պաշտպանութեան նախարարութեան 3 նախկին բարձրաստիճան պաշտօնեաներ՝ Սպառազինութեան վարչութեան նախկին պետ, գեներալ-մայոր Մելիկ Զիլինգարեանը, Սպառազինութեան վարչութեան աւտոժառուգութեան նախկին պետ, գնդապետ Արմէն Մարգարեանը, նիւթատեխնիկական ապահովման ղեկարտամենտի քիմիական, ինժեներական եւ հետախուզական միջոցներով ապահովման բաժնի պետ Մհեր Պապեանը, ովքեր մեղադրուում են իշխանութիւնը չարաչափեւ մէջ, որն առաջացրել է ծանր հետեւանքներ: Այս ձերբակալութիւնների մասին հարցին պատասխանելով՝ ՊՆ խօսնակը, մասնաւորապէս, ասաց. - «Թարմ օրինակ բերեմ՝ մի քանի օր առաջ ձերբակալուեց փոխգնդապետ, եւ պատերազմից մի քանի օր առաջ ձերբակալուեցին գնդապետներ: Դրանք կապ ունէին պատերազմի հետ, իհարկէ՝ ոչ: Դրանք ներքին վերահսկողութեան ինդիւրներ են: Դրանք փաստեր են, պէտք չէ խեղաթիւրել»:

«Այսօր մեզանում, ցաւօք, ձեւաւորուել է մի այսպիսի մթնո-



ՀՀ պաշտպանութեան նախարարութեան խօսնակ Արծրուն Յովհաննիսեան

լորտ, որ մենք մոռացել ենք, որ բանակը իր ինդիւրները կատարել է, մենք մոռացել ենք, որ բանակը յաղթել է եւ միանգամից ասում ենք՝ այնուամենայնիւ, մենք ունեցել ենք թերութիւններ: Այո, ունեցել ենք, եւ ոչ մէկը չի հերքում: Ոչ մի պաշտօնատար անձ չի նշել, որ մեզ մօտ ամէն ինչ կատարեալ է: Եւ հիմա էլ բոլոր փոփոխութիւնները միտուած են էլ աւելի բարձրացնելու մեր մարտունակութիւնը եւ վերացնելու թերութիւնները: Ինչ վերաբերում է նոր ռազմավարութեանը, նորից եմ ասում՝ ես չեմ հակադարձում Սամուէլ Բարաեանի կամ որեւէ մէկ այլ նախկին զինուորականի դիտարկումներին, կամ քաղաքական գործիչներին, որոնք շատ դէպքերում պահանջում են բաներ, որոնք անհաւանական են, որովհետեւ գործի մասնագէտը չեն: Հայաստանի Հանրապետութիւնում վաղուց գոյութիւն ունի համապատասխան ռազմավարութիւն՝ անվտանգութեան դոկտրին եւ այլն: Կոնկրետ Ջինուած ուժերի կիրառման մասով գոյութիւն ունեն յստակ փաստաթղթեր, եւ այս տարուանից մենք յայտարարել ենք, որ բանակի զարգացման յաջորդ հնգամեակի պլան է հաստատուել, որի համաձայն մեր շատ ու շատ գործառոյթներ, մեր կառուցուածքը, մեր շատ ու շատ հարցեր փոխուելու են: Այսինքն՝ դիւանդիկ, մոդեռնիզացնելու փուլում ենք մենք այս պահին արդէն»:

«10 Սլոդ-ը Դարձել է 47 Սլոդ. Սա Կոռուպցիա՞ է, Թե՞ Ոչ»

«Բիւջէի մուտքերի մէջ որքա՞ն է կազմում փոքր եւ միջին բիզնեսի մասը: Խնդրում եմ ասել նաեւ բիւջէի ներքին համախառն արդիւնքի դինամիկան՝ անցեալ տարուայ նկատմամբ դոլարով: Դուք հաշուում եք ՀՆԱ-ներդրում, ՀՆԱ-պարտք յարաբերակցութիւնը դրամով, իսկ Համաշխարհային բանկին, վալյուտային ֆոնդին դրանք դոլարային արտադրութեամբ են ներկայացուում, թէ՞ դրամով», - Աժ-ում Ֆինանսների փոխնախարար Ատոմ Զանջուղագեանից հետաքրքրուեց ՀԱԿ պատգամաւոր Արամ Մանուկեանը:

«Այս պահին իմ ձեռքի տակ ՓՄՁ-ի կողմից կատարուած վճարումների մասին տեղեկատուութիւնը բացակայում է», - պատասխանեց պարոն Զանջուղագեանը: Նա շեշտեց, որ օրէնսդրութեամբ սահմանուած է, որ ներդրումների եւ պարտքերի վերաբերեալ տեղեկատուութիւնը պէտք է ներկայացուեն դրամով: «Սակայն դուք իրաւացի էք, որ միջազգային կազմա-

կերպութիւնները փորձում են վերլուծութիւն կատարել, դրանք վերածում են իրենց հասկանալի արժոյթի»:

«Իմ համոզմամբ՝ դոլարային արտադրութեամբ պարտքի 50 տոկոսը մենք անցել ենք: Դուք ներկայացնում էք դրամայինով եւ ասում էք՝ չենք անցել», - նկատեց Արամ Մանուկեանը: Պատգամաւորը նաեւ յիշեցրեց. «Մենք խօսում ենք կոռուպցիայից եւ կառավարութիւնն էլ ծառայողական մեքենաների մասին էր խօսում: Ես կարդում եմ յօդուածը՝ 10 մլրդ դրամ մեքենաներ եւ սարքաւորումներ: Մենք այստեղ հաստատել ենք բիւջէի մէջ այդ թիւը: Տարուայ ընթացքում 10 մլրդ-ը դարձել է 47 մլրդ: Սա կոռուպցիա՞ է, թէ՞ ոչ: Եւ ի՞նչ իրաւունք ունէր կառավարութիւնը 5 անգամ թիւը մեծացնել»:

Ատոմ Զանջուղագեանն ասաց. «Մեքենաներ-սարքաւորումներ անուանումը մեքենաների հետ քիչ առնչութիւն ունի»:

ԼՈՒՐԵՐ

«Ակօս»-ը Կիրաւորական Է Համարում Պոլսոյ Պատրիարքի Կոխանորդ Աթեշեանի նամակը

Ստամբուլի հայոց պատրիարքի ընդհանուր փոխանորդ, արքեպիսկոպոս Արամ Աթեշեանը նամակ է ուղարկել Թուրքիայի նախագահ Թայիփ Էրդողանին՝ յայտնելով, որ վշտացած է անցած շաբաթ Բունդեսթագի կողմից ընդունուած Հայոց ցեղասպանութիւնը ճանաչող բանաձեւի պատճառով:

Պատրիարքարանի ֆեյսբուքեան էջում հրատարակուած նամակում Աթեշեանը հայ համայնքի անունից ափսոսանք է յայտնել գերմանացի օրէնսդիրների որոշման համար՝ յայտարարելով, թէ «հայերը օգտագործւում են իմպերիալիստական ուժերի կողմից»: Նա անընդունելի է սխալ է համարել, որ Գերմանիայի խորհրդարանը «գերմանացի ժողովրդի անունից որոշում է կայացնում իր իրաւասութիւնների մէջ չմտնող հարցի վերաբերեալ, օրինականացնում այն, իրեն դատաւորի տեղ դնում»:

Պատրիարքի փոխանորդի համոզմամբ՝ բանաձեւը ընդունուել է «Թուրքիային եւ թուրք ժողովուրդին մեղադրելու եւ պատժելու համար եւ վնասել Թուրքիայի հաշուեհան վերին եւ ստորին ինքնութիւնները»:

Անդրադառնալով բանաձեւի բովանդակութեանը՝ Արամ Աթեշեանը «էթիկայի տեսանկիւնից վիճելի» է համարել, որ «ողբերգական իրադարձութիւններում գերմանական կայսրութեան դերը երկու տողով է յիշատակում, իսկ Օսմանեան Թուրքիան ներկայացնում որպէս տեղի ունեցածի ողջ մեղաւորը»:

Արքեպիսկոպոս Աթեշեանը ընդգծել է, որ պատրիարքարանը քաղաքացիական կապերով կապուած է պետութեանը եւ մշտապէս կատարել է իր պարտաւորութիւնները:

Յիշեցնելով, որ Թուրքիայի հայերը այդ ցաւալի եւ վշտալի օրերը վերապրածների թոռներն են՝ Աթեշեանը յաւելել է. - «Շարունակելու ենք վառ պահել օսմանեան հայերի յիշատակը եւ յիշել հայերի եւ թուրքերի՝ հազար տարուայ պատմութիւն ունեցող համատեղ ապրելու մշակոյթը»:

«Ակօս» պարբերականը հանդէս է եկել պատասխան նամակով: «Ակօս»-ի խմբագրականը իր անհամաձայնութիւնն է յայտնել Աթեշեանի արտայայտած կարծիքի հետ՝ ընդգծելով, որ վերոնշեալ նամակը կարգացել է բարկութեան եւ ամօթի զգացումով:

«Ընդունէք այս նամակը որպէս այդ համայնքի անդամ հանդիսացողների, սակայն ձեր տեսակէտներն ու ձեւակերպումները չընդունողների ձայնը: Մի պետութեան կողմից սեփական քաղաքացիներին իրենց բնակավայրերից համակարգուած կերպով գրեթէ ամբողջութեամբ ջնջելու փաստը դուք անուանում էք «Առաջին համաշխարհային պատերազմի ողբերգական ժամանակաշրջանում տեղի ունեցած դէպքեր»: Այս ձեւակերպումը վիրաւորանք է այդ ժողովրդի նախնիների, գոհերի եւ ողջերի հասցէին», - մասնաւորապէս ասուած է «Ակօս»-ի հրատարակած բաց նամակում:

Ռոհանի. Իրանը Պատրաստ է Օգնել Սեւ Ծովը Հայաստանով Միացնել Պարսից Ծոցին



Իրանի նախագահ Հասան Ռոհանին ՀՀ արտգործնախարար Էդուարդ Նալբանդեանի հետ հանդիպման ժամանակ

Թեհրանը պատրաստ է Հայաստանին օգնութիւն ցուցաբերել տեխնիկական եւ ինժեներական ոլորտներում:

Այս մասին ասել է Իրանի նախագահ Հասան Ռոհանին ՀՀ արտգործնախարար Էդուարդ Նալբանդեանի հետ հանդիպման ժամանակ: Իրանի նախագահը հաստատ

տել է, որ իր երկիրը պատրաստ է օգնել Սեւ ծովը Հայաստանի տարածքով միացնել Պարսից ծոցին, փոխանցում է FARS-ը:

«Հայաստանն ու Իրանը միանման դիրքորոշում ունեն տարածաշրջանում եւ միջազգային ասպարէզում զարգացման հարցում», - յաւելել է նա:

Բալո Սահակեան. «Արցախի անկախութեան ճանաչումն անխուսափելի է»



Լեւոնային Ղարաբաղի նախագահ Բալո Սահակեան

Լեւոնային Ղարաբաղի նախագահ Բալո Սահակեանը հարցազրոյց է տուել ռուսաստանեան «Ռեզնոնս» գործակալութեանը եւ յայտարարել՝ «քառօրեայ պատերազմով Ատրպէյջանի նախաձեռնած արկածախնդրութիւնը ձախողուց ՊԲ-ի հերոսութեան, պրոֆեսիոնալիզմի, ինչպէս նաեւ Հայաստան-Արցախ-Միկուք եռամիասնութեան շնորհիւ»:

«Արցախի անկախութեան ճանաչումն անխուսափելի է», - յայտարարել է Լեւոնային Ղարաբաղի նախագահն ու յաւելել. - «Ատրպէյջանի այս ագրեսիան ծանր հարուած է հասցրել բանակցային գործընթացին ու հակամարտութեան խաղաղ կարգաւորմանն ուղղուած ԵԱՀԿ Մինսկի խմբի ջանքերին»:

Անդրադառնալով շփման գծում խաղաղութեան ամրապնդման ու հետաքննող մեխանիզմների ներդրման հարցերին՝ Բալո Սահակեանը յայտարարել էր - «Նախքան քառօրեայ պատերազմը մենք մէկ անգամ չէ, որ Մինսկի խմբին ու ԵԱՀԿ նախագահի անձնական ներկայացուցիչ Անջէլ Կասպչիկին առաջարկել ենք այս ուղղութեամբ

անհրաժեշտ միջոցառումներ իրականացնել: Համաձայնագրերը փորձըմբռնումով են մօտեցել մեր առաջարկներին, սակայն Պաքուի ապակառուցողական քաղաքականութեան շնորհիւ դրանց իրագործումը տապալուեց»:

Այս հարցերի շուրջ Հայաստանի ու Ատրպէյջանի արտգործնախարարների հետ նախօրէին բանակցութիւններ են ունեցել ԵԱՀԿ Մինսկի համանախագահները: Էլմար Մամեդբարովի հետ հանդիպումը հետաքրքիր, իսկ էդուարդ Նալբանդեանի հետ հանդիպումը գերազանց գնահատելով՝ ամերիկացի համանախագահ Ջէյմս Ուորլիքը ռուս եւ ֆրանսացի գործընկերների հետ այսօր տարածած յայտարարութեան մէջ նշել է, որ նախարարների ու շղարկութեանն են ներկայացրել Կասպչիկի գրասենեակի ընդլայնման եւ ԵԱՀԿ-ի յետաքննական մեխանիզմի ստեղծմանն առնչուող փաստաթղթերի նախագծերը: Հաղորդագրութեան համաձայն՝ արտգործնախարարները հաստատել են նախագահների համաձայնութիւնը Յուլիսին բանակցութիւնների յաջորդ փուլն անցկացնելու վերաբերեալ:

Հայկական TSD Ընկերութիւնը Երեւանում Ներկայացրել է ArmPhone Հեռախօսները

Հայկական Technology and Science Dynamics (TSD) ընկերութիւնը Երեւանում ներկայացրել է ArmPhone սմարթֆոնների շարքը: Ընկերութեան գլխաւոր տնօրէն Վահան Շաքարեանը լրագրողներին յայտնել է, որ հեռախօսներն ամբողջութեամբ հայ մասնագէտների մշակումն են: Որոշ բաղադրիչներ պատուիրում են արտերկրից, այնուհետեւ Հայաստանում հաւաքում սմարթֆոնը:



Աւելի վաղ ընկերութիւնը յայտարարել էր որոշ մասեր տեղում արտադրելու հնարաւորութեան մասին, այդ թւում՝ պլաստմասս» պատեանների: «Հայաստանում նման արտադրութիւն կայ, բայց որակը, ցաւօք, առայժմ մեզ չի բաւարարում», - նշեց Շաքարեանը:

Մէկ հերթափոխի ընթացքում ընկերութիւնը կարող է 500 սմարթֆոն թողարկել, իսկ անհրաժեշտութեան դէպքում կարող է նաեւ 3 հերթափոխով աշխատել: Հեռախօսի միջուկն ամբողջութեամբ հայկական է՝ հայկական Android, ստեղծարար եւ զանգերի երաժշտութիւնը:

«Հայերէնով յաւելուածների

հեղինակներն առայժմ մեզ չեն դիմել, բայց անվճար յաւելուածները պատրաստ ենք նոյնպէս անվճար տեղադրել: Իսկ եթէ դրանք շահույթ են հետապնդում, ապա կարող ենք քննարկել համագործակցութեան տարբերակները», - յայտարարեց նա:

«Հեռախօսները նախատեսւած են No questions asked սխեմայով երաշխիք: Այն գործում է տեխնիկական բոլոր վնասուածքների դէպքում, եթէ միայն դուք մտածած չէք նետել ձեր հեռախօսը յատակին: Բայց եթէ որեւէ այլ պատճառով այն փչացել է, մենք չենք վերանորոգում: Պարզապէս վերցնում ենք այն ու նորն ենք տրամադրում», - յաւելեց Շաքարեանը:

Կախուած մոդելից՝ հեռախօսներն արժեն 50-ից 150 հազար դրամ (100-ից 315 դոլար):

ԿԱՐՕ ՓԱՅԼԱՆԸ՝ ԲՈՒՆԴԵՍԹԱԳԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՐԹԸ ՅԱՆՑԱՆՔԻ ՏԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԹՈՒՐՔԻԱՅԻՆՆ Է

Գերմանիայի կողմից Հայոց ցեղասպանության հետ առերեսուելը որպես Օսմանեան Թուրքիայի դաշնակից եւ յանցակից, պատմական կարեւորություն ունի: Այս մասին յայտարարել է քրտական «Ժողովուրդների դեմոկրատական» կուսակցության հայ պատգամաւոր Կարո Փայլանը:



Հայադգի պատգամաւոր Կարո Փայլան

Քրտական Dayanisma կայքի փոխանցմամբ՝ Բունդեսթագի որոշումից յետոյ Կարո Փայլանը նշել է, թէ Հայոց ցեղասպանութիւնն իրականացուել է գերմանացի սպաների ու պաշտօնեաների աչքի առաջ, որոնք աջակցել են ծրագրաւորմանն ու յանցանքի կոծկմանը: Պատմական կարեւորություն ունի, որ Հայոց ցեղասպանութեան յանցակից Գերմանիան առերեսուելու է Ցեղասպանութեան հետ:

Սակայն ամենակարեւորը, որ յանցանքի իրական տէր հանդիսացող Թուրքիան առերեսուելի ու փրկուելի ցեղասպան ականդոյթից», - ասել է Կարո Փայլանը:

Յիշեցնենք, որ Յունիսի 2ին Գերմանիայի խորհրդարանն ընդունեց Հայոց ցեղասպանութիւնը ճանաչող բանաձեւը, որտեղ նշուեմ է, որ Բունդեսթագը խոնարհուեմ է

101 տարի առաջ Օսմանեան կայսրութիւնում հարկադիր տեղահանութեան եւ ջարդերի ենթարկուած հայերի եւ միւս քրիստոնեայ փոքրամասնութիւնների առջեւ: Բանաձեւում նաեւ նշուեմ է, որ Բունդեսթագը ցաւում է, որ ժամանակին Գերմանիայի կառավարութիւնը ոչինչ չի ձեռնարկել՝ կանգնեցնելու մարդկութեան դէմ յանցանքը, որի համար Բունդեսթագն ընդունում է Գերմանիայի պատմական պատասխանատուութիւնը:

ՊՈԼՍԱՅԱՅ ՊԱՏԳԱՄԱԻՐ ՍԵԼԻՆԱ ՏՈՂԱՆ ԹՈՒՐՔԻԱ ՊԵՏՔ Է ԴԱԴՐԻ ԳԼՈՒԽԸ ՀՈՂԻՆ ՍԵՋ ԹԱՂԵԼԵՆ

Գերմանիոյ խորհրդարանին մէջ Հայոց ցեղասպանութեան բանաձեւի վաւերացման վերաբերեալ յայտարարութիւն մը կատարած է նաեւ Թուրքիոյ պաշտօնակա ընդդիմադիր՝ Հանրապետական ժողովրդային կուսակցութիւնը ներկայացնող պոլսահայ պատգամաւոր Սելինա Տողան:



Պալսահայ Պատգամաւոր Սելինա Տողան

Թրքական «Էնստնհայեր» լրատուական կայքը կը գրէ, որ պոլսահայ պատգամաւորին յայտարարութիւնը կը տարբերի իր կուսակցութեան դիրքորոշումէն: Նշենք, որ հանրապետականները եւս ստորագրած էին Թուրքիոյ խորհրդարանին կողմէ Գերմանիոյ քայլը դատապարտող համատեղ հռչակագիրը:

Կայտարարութեան բազմակարծութիւն, չունինք իսօսքի ազատութիւն, ո՛չ ալ կրնանք գիրար հանդուրժել»:

Սելինա Տողան ընդգծելով, որ ժամանակը հասած է, որ Թուրքիա դադարի իր գլուխը հողին մէջ թաղելէն:

Ան նաեւ խօսած է բանաձեւի այն կէտին մասին, ուր Գերմանիա կ'ընդունի իր պատասխանատուութիւնը:

Ան նաեւ նշած է, որ իր ընտանիքին մէջ, թէ՛ հայրական եւ թէ՛ մայրական կողմէն, կորուստներ արձանագրուած են Ցեղասպանութեան ընթացքին:

«Քննադատութիւններով, Պերլինէն Թուրքիոյ դեսպանը տուն կանչելով, «Մերսես» «Ինքնաշարժներէն քաջաբար հրաժարելով՝ Թուրքիա չի կրնար ազատիլ այս հարցէն: Երկիր մը, որ ֆաշիստական միջին անցած է, կրցաւ ընդունիլ նման բանաձեւ մը, որ կը համապատասխանէ անցեալի հետ առերեսուելու իր ականդոյթին: Գերմանիոյ մէջ լուրջ արխիւ կայ եւ եթէ Գերմանիան կ'ընդունի իր պատասխանատուութիւնը, ապա անիկա արխիւները ուսումնասիրելուն արդիւնք է», եզրափակած է պոլսահայ պատգամաւորը:

Նշելով, թէ ժամանակին միլիոններու հասնող հայերէն այժմ միայն հազարներ մնացած են՝ Տողան ըսած է. «Ինչպէս այլ կոտորածներու եւ ջարդերու, այնպէս ալ այս պարագային, կը պահանջենք խորհրդարանին մէջ համապատասխան յանձնաժողով ստեղծել: Սակայն, ցաւօք, նման քայլի մը իրագործման համապատասխան հիմքերը դեռ չկան: Չունինք խորհրդարանական համակարգ, որ

101 Տարի Ուշացումով Գերմանիա Գանչցաւ Հայոց Ցեղասպանութիւնը

Շարունակուած էջ 1-էն

մաձայն, խորհրդարանը պատմական յանձնաժողով չէ եւ հաստատ դատարան չէ, սակայն Գերմանիոյ խորհրդարանը չի կրնար եւ չ'ուզեր շրջանցել անյարմար հարցերը՝ ներառեալ Հայոց ցեղասպանութիւնը: «Մենք կ'ընդունինք որեւէ քննադատութիւն, նոյնիսկ եթէ ջղաչին է, սակայն Գերմանիոյ խորհրդարանի իսօսքի ազատութեան խոչընդոտումը անընդունելի է», ըսաւ ան, ակնարկելով թրքական սպառնալիքներուն:

Խորհրդարանական քննարկումներու ընթացքին եւ բանաձեւի վաւերացումէն ետք, հայերի տասարդներ տօնախմբութիւններ կազմակերպեցին Գերմանիոյ խորհրդարանին առջեւ:

Գերմանիոյ վարչապետ Անկէլա Մըրքըլը, որ չմասնակցեցաւ քուէարկութեան նիստին, յայտարարեց, որ բանաձեւի վաւերացումը օրինակ մըն է ժողովրդավարական մշակույթը գործողութեան մէջ տեսնելու: «Երբ դուք այնքան ալ համաձայն չէք ձեր գործընկերներուն հետ եւ որոշ հարցերու մէջ տարակարծութիւններ ունիք, ապա այդ նոյնպէս ժողովրդավարական մշակույթի մէկ մասն է», ըսաւ Մըրքըլը:

Գերմանիոյ մէջ վաւերացուած բանաձեւին Անգարա հակադրեց այնպէս ինչպէս վարուած էր անցեալ տարի՝ դեսպաններ տուն կանչելով եւ յարաբերութիւններու վատթարացմամբ սպառնալով: Իբր առաջին քայլ, Անգարայի իշխանութիւնները տուն կանչեցին Պերլինի մօտ Թուրքիոյ դեսպանը, իսկ Պոլսոյ մէջ գերմանական հիւպատոսարանին առջեւ ապահովական ուժեր դիմեցին խտրացուած անվտանգութեան միջոցներու, կանխարգիլելու համար հաւանական բողոքի ցույցերը:

Թուրքիոյ նախագահ Ռէճէփ Թայիպ Էրտողան արագ արձագանգեց գերմանական բանաձեւին: Ան լրագրողներուն յայտնեց, որ Պունտեսդակի որոշումը լրջօրէն պիտի ազդէ թուրք-գերմանական յարաբերութիւններուն վրայ: Էրտողանի համաձայն, յառաջիկայ բոլոր քայլերը պիտի վճռուին դեսպանի տունդարձէն ետք: Իսկ վարչապետ Պինարի Եըլլըրըմ յայտարարեց, որ Թուրքիոյ անցեալին մէջ ամօթայի միջադէպ գոյութիւն չունի, որուն համար Թուրքիան գլուխը կրնայ կամխել: «Գերմանիոյ որոշումը սխալ որոշում էր: Թուրք ազգը կը հպարտանայ իր անցեալով: Աւելի յստակ քայլերու պիտի ձեռնարկենք, երբ ծանօթանանք ընդունուած բանաձեւի յօդուածներուն», գզուշացուց Թուրքիոյ վարչապետը: Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մաուլուտ Չաւուշօղլու կարծիք յայտնեց, որ «Իրենց պատմութեան սեւ էջերը փակելու միջոցը խորհրդարանի անպատասխանատու որոշումներով ուրիշ երկիրներու պատմութիւնը սեւեցնելը չէ»:

Գերմանիոյ համամարդկային արժէքներն ու հետեւողականութիւնը:

Հայաստանի արտաքին գործոց նախարար Էտուարտ Նալպանտեան յայտարարեց, որ Հայաստան կ'ողջունէ հայերու եւ քրիստոնեայ այլ ժողովուրդներու դէմ իրականացուած Ցեղասպանութեան մասին բանաձեւի ընդունումը: Ան աւելցուց որ, Պունտեսդակի կողմէ ընդունուած բանաձեւը կը հանդիսանայ Գերմանիոյ արժէքաւոր ներդրումը ոչ միայն Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչումին եւ դատապարտումին ուղղութեամբ, այլեւ ընդդէմ ցեղասպանութիւններու եւ մարդկութեան դէմ ոճիրներու կանխարգիլման պայքարին մէջ:

ՆԱԹՕ-ի ընդհանուր քարտուղար Ենս Սթոլթենպըրկ իր կարգին նշեց, որ Թուրքիան կազմակերպութեան անդամ է, իսկ Հայաստանը՝ արժէքաւոր գործընկեր: «Ես յոյս ունիմ, որ մենք կը տեսնենք Հայաստանի եւ Թուրքիոյ յարաբերութիւններու բնականոնացում՝ որքան հնարաւոր է շուտ», ըսաւ Սթոլթենպըրկը:

Թուրքիոյ նախագահ Ռէճէփ Թայիպ Էրտողան յայտարարեց, որ Անգարա չի նախընտրեր հապճեպ որոշումներ կայացնել: Խօսելով Գերմանիոյ խորհրդարանին մէջ Հայոց ցեղասպանութեան գծով վաւերացուած բանաձեւին մասին Էրտողան յայտարարեց, որ իրենք պիտի քննարկեն հակադարձութեան յարմար միջոցները: Ըստ նախագահին, Անգարա կը ձգտի բարեկամ երկիրներուն թիւը աւելցնել, սակայն եթէ ուրիշներ կը մերժեն, ապա կը կորսնցնեն բարեկամութիւնը: «Պունտեսդակին որոշումը որեւէ արժէք չունի: 1915 թուականին վերաբերեալ մեր մօտեցումը բոլորին յայտնի է: Անոնք չեն հասկնար, որ կրնան Թուրքիոյ նման կարեւոր բարեկամ մը կորսնցնել: Այս որոշումէն ետք մենք պիտի ուսումնասիրենք եւ եզրակացութիւններ կայացնենք», ըսաւ Էրտողան:

Միւս կողմէ, Թուրքիոյ ժողովուրդներու դեմոկրատական կուսակցութեան նախագահ Սալահ-Էտին Տէմիրթաշ յայտարարեց, որ Գերմանիոյ կողմէ ընդունուած Հայոց ցեղասպանութեան ճանաչման բանաձեւը Թուրքիոյ դէմ պատժամիջոց մը չէ: «Այդ որոշումը հարիւր տարի ուշացած որոշում է: Թուրքիոյ մէջ այսօր ալ ցեղասպանութեան կ'ենթարկեն քիւրտները: Եթէ Գերմանիան այս հարցով 100 տարի ետք որոշում մը կայացնէ, ապա այդ իմաստ պիտի չունենայ», ըսաւ քիւրտ կուսակցապետը:

Ժողովուրդներու դեմոկրատական կուսակցութիւնը մերժած էր ստորագրել գերմանական բանաձեւը դատապարտող խորհրդարանի որոշումին տակ:

Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրով իր կարգին յայտարարեց, որ Գերմանիոյ մէջ Հայոց ցեղասպանութեան մասին բանաձեւի ճանաչման դէմ թրքական հակադարձութիւնը անհամարժէք է: «Կը կարծեմ, որ իրականութեան մէջ այս կացութեան պատճառը այն է, որ Թուրքիան չուզեր իսկապէս գործընկեր ըլլալ շարք մը հարցերու մէջ, որովհետեւ կը փորձէ վերադարձնել իր գործընկերները՝ ներառեալ Եւրոպան», ըսաւ Լաւրովը:

New York Times. ԱՅՈՒՍ ԱՍՑԵՂԱՆՈՒԹԻՒՆ Է

ՐԱՆԳԻ՝ՍՏ ՔԱՍՅԷՔ, ՔՍԱՆ ԱՆՍԱՐՆԵՐ

The New York Times | <http://nyti.ms/22C7FDC>

The Opinion Pages | EDITORIAL

Yes, It's Genocide

By THE EDITORIAL BOARD | JUNE 3, 2016

In what has become an almost annual exercise, Turkey has thrown a fit because someone has spoken the truth about its dark past. This time, it has pulled its ambassador from Berlin and threatened dire consequences over a resolution, passed overwhelmingly by the German Parliament on Thursday, declaring that the century-old massacre of Ottoman Armenians was a genocide. That is what Turkey does every time a foreign government dares to challenge its discredited claim that the Armenians perished in the cruel

Թուրքիայի հիստորիկական այն բանի պատճառով, որ ինչ-որ մէկը ճշմարտութիւնն է պատմել նրա մութ անցեալի մասին, արդէն գրեթէ ամենամեայ երեւոյթ է դարձել: Այդ մասին ասուած է «The New York Times» թերթի կայքում հրատարակուած խմբագրական յօդուածում:

Այս անգամ Թուրքիան յետ է կանչել Բեռլինում իր դեսպանին եւ սպառնացել է, որ Բունդեսթագի ընդունած՝ Հայոց ցեղասպանութեան մասին բանաձեւը կործանարար հետեւանքներ կ'ունենայ: «Սա այն է, ինչ Թուրքիան անում է ամէն անգամ, երբ որեւէ օտարերկրեայ կառավարութիւն համարձակուած է վիճարկել այն կասկածելի պնդումները, թէ հայերը զոհուել են Առաջին համաշխարհային պատերազմի դաժան մատախուղում, ոչ թէ ժողովրդին ոչնչացնելու կանխամտածուած փորձի ընթացքում», - գրում են հեղինակները:

Նրանք յիշեցնում են, որ Թուրք պաշտօնեաները չաչտնել են, թէ Գերմանիայի որոշումը հիմնուած է «ոչ օբիեկտիւ, աղաւաղուած եւ տարբեր սուբիեկտիւ քաղաքական դրդապատճառների վրայ»:

«Ոչ, դա ցեղասպանութիւն է եղել՝ 20-րդ դարի առաջին ցեղասպանութիւնը: Պատմաբանները հաստատել են, որ անվիճելիօրէն 1,5 մլն հայ կանխամտածուած ոչնչացուել է կամ մահուան է ուղարկուել 1915-16 թուականներին Օսմանեան կայսրութեան քայքայող կառավարութեան կողմից եւ որ նրանք եւ քրիստոնեայ այլ փոքրամասնութիւններ կարող էին պատերազմի ընթացքում Ռուսաստանի կողմն անցնել», - ասուած է յօդուածում:

Նրանց խօսքով, հայերի հա-

մար, որոնց միլիոնները ցրուած են ամբողջ աշխարհում, ընդունելը, թէ սպանող ցեղասպանութիւն էր, ազգային ծաւալի առաքելութիւն է, որը հանգեցրել է աւելի քան 20 երկրի կողմից պաշտօնական ճանաչման:

Յօդուածում նշուած է, որ հայերի՝ պատմական հատուցում ստանալուն ուղղուած գործողութիւնները լիովին արդարացուած են, բայց որ քան աւելի է աշխարհը ճանաչում փաստը, այնքան աւելի ազդեցիկօրէն է բղաւում Թուրքիան. «Մի քանի տարի առաջ, երբ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայյիպ էրդողանը դեռ վարչապետ էր յարաբերականօրէն լայն մտահորիզոնով, նա, թուում էր, պատրաստ է աւելի հաշտուողական դիրքորոշում որդեգրել հայկական հարցի վերաբերեալ: Բայց դա չեղաւ եւ էրդողանը, որը գնալով աւելի աւտորիտար դեկապար է դառնում, Անգելա Մերկելին նախապէս գոռաչացրել է, որ որոշումը կը վնասի «Գերմանիայի հետ երկկողմ դիւանագիտական, տնտեսական, առեւտրական, քաղաքական եւ ռազմական յարաբերութիւններին»:

Միաժամանակ հեղինակները կարծում են, որ սպառնալիքները կարող են ազդել, որովհետեւ Թուրքիան ՆԱՏՕ-ի կարեւորագոյն դաշնակիցներից է եւ յատկապէս կարեւոր է Գերմանիայի եւ Եւրոպական Միութեան համար, որովհետեւ նրանք փորձում են կանգնեցնել սիրիացի փախստականների հոսքը: Նրանք նաեւ յիշեցնում են, որ նախագահ Օպաման 1915-ի իրադարձութիւնները որպէս ցեղասպանութիւն է ճանաչել, երբ նախագահի թեկնածու էր, բայց յետոյ

Շարք էջ 8

ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒԻ ԴԱԻԻԹԵԱՆ

Գերման Պոլստրաթակի Յունիս 2-ին առած հայանպաստ որոշումը նուէր է Յունիս 15-ին կախաղան բարձրացած ու մարտիրոսացած հայ ազգի քսան հերոս գաւազաններուն, որոնք հնչակեան դրօշի տակ երդում տուած էին պայքարիլ ու գոհուիլ հայ ազգի ազատագրութեան եւ անոր հայրենիքի անկախութեան համար:

Ուիլհելմեան կայսերապաշտութեան եւ հիթլերեան ազգայնապաշտութեան վնասները ճաշակած մեր ժողովուրդը ողջօրէնով եւ ուրախութեան արցունքներով ընկալեց ներկայ Գերմանիոյ խիզախ եւ արգարարար կեցուածքը, երբ անոր ազգի բոլոր քաղաքական կողմերը ներկայացնող հոսանքները, արհամարհելով ամէն թրքական սպառնալիք եւ գառանցանք, եկան խոնարհելու Հայկական Ցեղասպանութեան անվիճելի եւ անմար իրականութեան ու յիշատակին առջեւ:

Կ'ըստի թէ 1945 թուականի Մայիս ամսուի, երբ հայկական «Թամանեան» ջոկատը յաղթական արշաւով մուտք կը գործէր Պերլին, անոր գնդապետ Նուէր Սաֆարեանը, ըստ իր գինուորներէն մէկուն վկայութեան, հայ զինուորները կը յորդորէր գտնել Ուիլհելմեան կայսեր գերեզմանը, որպէսզի հայու մէջով պղծէին գայն: Արեւմտահայ ծնողներէ սերած այդ հերոս հրամանատարը, 1915-էն ուղիղ երեսուն տարի ետք, իր նահատակեալ ծնողքին եւ ժողովուրդին վրէժը կարծէք այդպէս կ'ուզէր լուծել եւ գրաւեալ Պերլինի փլատակներուն վրայ հայկական դաւուր-գոռնայի նուագով, երգով ու շուրջպարով իր վերապրած հայու ուժին ձայնը լսելի կը դարձնէր: Զէ՞ որ Թուրքիան դաշնակից էր Գերմանիոյ եւ գերման զինուորական խորհրդատուներու ցուցմունքներով կը կատարուէր ու կը գործէր Թուրք հայատեաց քաղաքականութիւնը եւ անոր արդիւնք՝ Հայկական Ցեղասպանութիւնը:

Եւ Նուէր Սաֆարեաններու յաղթական երթով ու ոգիով քալող վրիժառու սերունդներ, հայրենիքի մէջ եւ հայրենիքէն դուրս, գաղտնի կամ ոչ-գաղտնի բանակներ եւ Հայ Դատի անհամար ու աննման զինուորներ աննահանջ պայքարեցան հայ վերածնունդի դրօշ պարզած, որպէսզի գար պանծալի ու ինկելի այս օրը եւ տակաւին՝ գալիք բոլոր օրերը, որուն մէջ եւ որոնց ընդմէջէն դէպի յառաջ պիտի քայլէ մեր

ժողովուրդը ներքին թէ արտաքին թշնամի ուժեր տապալելով, հասնելու այս անդեկավար հրաշագործ մեր ժողովուրդի պարզ ու խոնարհ խաւերու կողմէ կերտուելիք յաղթանակին:


Արգարութեան յաղթանակը դժբախտաբար քիչ ատեն կը տօնեն փոքր երկիրներու ազգերն ու ժողովուրդները: Մեծ պետութիւններու շահերն ալ քիչ ատեն կը համընկնին փոքր ազգերու շահերուն հետ: Ուրեմն ինչպէ՞ս բացատրել Գերմանիոյ պէս ազդեցիկ ու հզօր երկրի մը ազգային ներկայացուցիչներուն բռնած դիրքը ի նպաստ մեզի պէս փոքր երկրի ու ազգի մը: Գուցէ հայերս մեր լաւ արարքներով եւ բարք ու սարքով աշխարհի մէջ սկսած ենք յարգանք պարտադրել. կամ գուցէ իր հիթլերեան անցեալով ամօթահար զգացումներով տառապող Գերմանիան զգաց նաեւ ամօթը իր ուիլհելմեան անցեալին. կամ գուցէ քաղաքակիրթ ըլլալու յատկութիւններէն մէկը քսանըմէկերորդ այս դարուն դարձած է կանգնելի կողքին ճշմարտութեան՝ որ քան ալ փորձեն ոմանք քօղ քաշել վրան, եւ կամ գուցէ մեր մէկուկէս միլիոն սրբադասուած նահատակներու հոգիներու բանակը պաշտպանուելու խաչակիրեան դասեր կու տայ հաւաքուած Եւրոպային...:

Յունիս ամսու այս նուէրը յունիսեան անցեալին կախաղան բարձրացած հնչակեան Քսան կախաղաններուն, որոնց անկախ Հայաստան կազմելու մեղադրանքով տրուած մահուան վճիռը եւ խմբային նահատակութիւնը չունի նման օրինակ ազատագրական պայքարի մեր պատմութեան մէջ, յոյսով կը լեցնէ մեր սրտերը, որ յունիսեան օրուան մը մէջ անոնց անյայտ աճիւնները գտնուին, տեղափոխուին ու գետեղուին հոն՝ ուր վերջնական հանգիստ գտած են մեր ազգի հերոսները, կողքին՝ Մեծն Անդրանիկի եւ միւս բոլոր մեծերուն, որոնք հանդիսացան կերտիչները ներկայ Հայաստանի: Նաեւ յոյսով կը լեցնէ մեր սրտերը, որ Հայաստանի դեկալար մարմինը անկողմնակալ դիրքորոշուի իր բոլոր հերոսներուն նկատմամբ, ըլլան անոնք Գարեգին Նժդեհներ, Անդրանիկներ կամ Փարամազներ, եւ մեր մեծերու յիշատակը պատշաճօրէն յարգուի, ըլլան անոնք Նուէր Սաֆարեաններ, Բաղդամեաններ, Բաբաջանեաններ կամ Միկոյեաններ:

Գերմանիոյ այս յունիսեան նուէրով հանգիստ քնացէք, հայ ժողովուրդի Քսան Անմահներ


Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909



SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs


<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--	---	---



A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրաճողս է

Coverage & Protection should be on the top of your priority list.



Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

Մեծ Շուքով Նշուեցաւ «Մասիս» Շաբաթաթերթի 35-Ամեակը

Շաբուձնախումբէջ 1-էն

կան կազմի անդամ, «Շիրակ» հրատարակչատան սեփականատէր, մտաւորական, ուսուցիչ, մանկապատանեկան գիրքերու հեղինակ եւ հասարակական գործիչ Յովհաննէս Հանէսեանը:

Այս առթիւ պատուոյ գիրը յանձնուեցաւ Յովհաննէս Հանէսեանի այրիին՝ տիկ. Սօսի Հանէսեանին: Յուշատախտակը յանձնելով ՄԴՀԿ վարիչ մարմնի անդամ եւ մամլոյ դիւանի պատասխանատու՝ Գաբրիէլ Մոլոյեան ըսաւ. «Ես մեծապէս կը գնահատեմ Յ. Հանէսեան մեծ մանկավարժը, որ սերունդներ դաստիարակած է, հայագիտութիւն եւ հայրենասիրութիւն ջանքած է, հայ գիրը, հայ երգերը տարածած է, հայուցութիւնը յեղաշրջած է իր հայկական երգերով, թրքախօս հայերը դարձած են հայախօս շնորհիւ «Շիրակ» երգարանի: Իրեն նմանները շատ պէտք ունի մեր գաղութը, որպէսզի հայրենասիրութեան շունչը միշտ վառ պահուի»:

Հանդիսավարը ներկայացնելով երեկոյի երկրորդ մեծարեալը՝ Նազարէթ Գեւորեանին, վեր առաւ անոր երկարամեայ բարերարութիւնները:

«Մեր մեծարեալը գաղութէն ներս կը բաժնէ գնահատանք, խրատականք ու քաջալերանք: «Երկիր եւ Մշակոյց» կազմակերպութեան միջոցաւ ան կը տանի մեծ ու շնորհակալ աշխատանք մեր մշակութային գանձերը եւ եկեղեցիները վերանորոգելու գծով, Հայ մամուլին ու հասարակական տարբեր կազմակերպութիւններուն օգնելով կը սատարէ անոնց գոյատեւման»,- ըսաւ հանդիսավարը եւ ապա Գաբրիէլ Մոլոյեան յուշատախտակը յանձնեց 35-ամեակի գլխաւոր հովանաւոր Տիար Նազարէթ Գեւորեանին:

Օրուայ երրորդ մեծարեալն էր Տօքթ. Արշակ Գազանճեան, որ 15 երկար տարիներ վարած է «Մասիս» շաբաթաթերթի խմբագրապետի պաշտօնը: Ան եղած է ՄԴՀԿ Կենտրոնի քարտուղար եւ Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան ատենապետ, ինչպէս նաեւ գիրքերու հեղինակ:

Պատուոյ գիր-յուշատախտակը յանձնելու համար բեմ հրաւիրուեց ՄԴՀԿ Արեւմտեան Ամերիկայի վարիչ մարմնի ատենապետ՝ Գրիգոր Խոտանեան: Ան իր խօսքին մէջ ըսաւ. «Մեզի համար հպարտութիւն է նշել «Մասիս» շաբաթաթերթի 35 ամեակը, հակառակ բոլոր դժուարութիւններուն թերթը գոյատեւեց, ներկայութիւնը զգալի դարձնելով գաղութէն ներս: Թերթի յաջողութիւնը կը պարտինք մեր ընթերցողներուն, բարեկամներուն, աշխատակիցներուն, յօդուածագիրներուն, նուիրատուներուն եւ բոլոր անոնց, որոնք աշխատեցան եւ գործեցին վարագոյրի ետեւէն»:

Դրուատանքի ու երախտագիտութեան խօսք ըսելով, ան բարձրօրէն գնահատեց մեծարեալներու ունեցած նպաստը «Մասիս» շաբաթաթերթի յարատեւութեան համար:

Ընկ. Գրիգոր Խոտանեան նաեւ յատուկ շնորհակալութիւն յայտնեց Տօքթ. Արշակ Գազանճեանին, որ իր առաջնորդող յօդուածներով, իր շուրջ համախմբած յօդուածագիրներով, աշխատակիցներով եւ մեր ազգա-

լին կեանքի մասին իր գրած յօդուածներով, մեծապէս նպաստեց, որպէսզի «Մասիսը» դառնայ եւ մնայ փնտուած մամուլ Լոս Անճելըսահայ կեանքէն ներս:

«Կ'օգտագործենք այս 35-ամեակի երեկոն երախտագիտութիւն յայտնելու մեր երեք պարգեւատրուող հայրենակիցներուն եւ ազգայիններուն, թող իրենց աշխատանքը վարակիչ դառնայ մեզմէ իւրաքանչիւրին եւ կ'ըսենք իրենց՝ վարձքերնիդ կատար», խօսքի աւարտին ըսաւ Ընկ. Խոտանեան:

Բեմ հրաւիրուեցաւ ՀՀ հիւպատոս՝ Պր. Վալերի Մկրտումեան: Ան իր խօսքին մէջ յատկապէս ըսաւ. «Թող տուէք առաջին հերթին Լոս Անճելիսի ՀՀ Գլխաւոր Հիւպատոսութեան անունից ջերմօրէն ողջունել ձեզ եւ շնորհաւորել «Մասիս» շաբաթաթերթի 35 ամեակի առթիւ: Շաբաթաթերթի կենսագրականը հիմնականում համընկնում է ՀՀ պետականութեան նորագոյն պատմութեան հետ իր մէջ ներառնելով ՀՀ երրորդ վերջին շրջանը... Օրգանը ստացաւ նոր բովանդակութիւն դրա հետ մէկտեղ ստանձնելով նոր պատասխանատուութիւն մի նոր առաքելութիւն...»:

Բովանդակալից ելոյթի ընթացքին յարգելի հիւպատոսը անդրադարձաւ Արցախի յաղթական անկախութեան եւ ամբողջ հայութեան միասնական ուժերով Հայաստանի եւ Արցախի հօգրացման համար առաջ տարուող քաղաքականութեան:

Հանդիսութեան պաշտօնական բաժնի աւարտելու համար բեմ հրաւիրուեցաւ Առաջնորդ Տ. Յովհաննէս Արք. Տէրտէրեան: Սրբազան հայրը գնահատեց հայ մամուլը եւ անոր մեծ դերը մեր հանրութեան կեանքէն ներս: Սրբազանը արժեւորելով «Մասիս» դերը ըսաւ. ««Մասիս» շաբաթաթերթը որպէս հեղինակաւոր եւ բարոյական ազդեցիկ թերթ մեր հաւաքական կեանքի մէջ, կը ներկայացնէ առողջ «պոնմերոն», որը կրնայ սնունդ տալ, կեանք տալ, ներշնչել եւ ուղղորդել: Մեր գաղութի իրական պատկերը ներկայացնող հաւասարակշռուած թերթն է: Միասնական ուժերով «Մասիսը» պէտք է պահել յաջորդ 35 տարիներու ն եւս: Բոլոր անոնք, որոնք որպէս մտաւորական, որպէս նուիրատու, որպէս նաեւ զօրավիգ կանգնող անձիք այս շաբաթաթերթը ոսկրածուծը դարձուցած են նաեւ լոյսի եւ յոյսի փարոսը մեր համայնքի կեանքի մէջ, մեր ծափահարութիւնները մասնաւոր կերպով թերթին այս տօնական առիթով»:

Սրբազանը նաեւ սրտագինաւ շնորհաւորեց եւ գովաբանեց երեք մեծարեալներուն՝ Յովհաննէս Հանէսեանի, Նազարէթ Գեւորեանի եւ Տօքթ. Արշակ Գազանճեանի անբասիր աշխատանքը:

Կատարուեցաւ զեղեցիկ մենապար Նոր Սերունդ Մշակութային Միութեան պարախումբի անդամներից Փիւնիկ Մինասեանի կողմից: Հրաշալի հայկական պար, որը արժանացաւ ներկաների բուռն ծափերուն:

Հանդէսը շարունակուեցաւ շնորհալի երգիչ Վաչէ Յակոբեանի պարեղանակներու կատարողութեամբ, որ ստեղծեց բարձր տրամադրութիւն:

«Մասիս» շաբաթաթերթի 35-ամեակին առթիւ կատարուեցան աւելի քան 40 հազար տոլարի նուիրատուութիւններ:



Ելոյթ կ'ունենայ Յովհաննէս Արք. Տէրտէրեան



Ելոյթ կ'ունենայ Հիւպատոս Վալերի Մկրտումեան



Ընկ. Գաբրիէլ Մոլոյեան պատուոյ գիր կը յանձնէ Տիկին Սօսի Հանէսեանին



Յետ մահու մեծարանքի արժանացած Պր. Յովհաննէս Հանէսեան



Ընկ. Գաբրիէլ Մոլոյեան պատուոյ գիր կը յանձնէ Տիար Նազարէթ Գեւորեանին



Ընկ. Գրիգոր Խոտանեան պատուոյ գիր կը յանձնէ Տօքթ. Արշակ Գազանճեանին




Ելոյթ կ'ունենայ հանդիսավար Յարութ Տէր Դաւիթեան



Մենապար կատարողութեամբ Փիւնիկ Մինասեանի

ՊՈԼՍԱՅԱՅ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ ՃԱԹԻՅ ԱՔԻՆԻ THE CUT- ՏԵՍԱԺԱՊԱԲԷՆԸ

ԼԵՒՈՆ ԱՐՔ. ԶԵՔԻԵԱՆԸ ՆՇԱՆԱԿՈՒԵԼ Է ՊԱՊԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿ




"The Cut" կը ներկայացնէ ողբերգական կեանքը այր մարդու մը (Նազարէթ Մանուկեան), որ կը փրկուի Հայոց Յեղասպանութենէն, Օսմանեան կայսրութեան շրջանին, սակայն կը կորսնցնէ իր ընտանիքը, հաւատքը եւ կը համարանայ: Գիշեր մը կը գիտնայ թէ իր երկուորեակ դուստրերը Արսինէն եւ Լուսինէն կրնան ողջ մնալ ցած ըլլալ եւ զանոնք փնտռելու իր ուղեւորութեան կը սկսի:

Տեսաժապաւէնը գրուած եւ արտադրուած է Գերման-թուրք ֆիլմարտագրիչ՝ Ֆաթիհ Աքինի կողմէ:

Տեսաժապաւէնը թէեւ ուրախ տեսարաններ չի պարունակեր, սակայն կը ներկայացնէ բաւարար չափով հարուստ դէպքերու հետեւողականութիւն մը, որ հանդիսատեսը կը դարձնէ լաւատես:

Տեսաժապաւէնը պիտի ցուցադրուի Պոլսահայ Միութեան կեդրոնին մէջ, Կիրակի, Յունիս 12, 2016, երեկոյեան ժամը 6:00ին: Մուտքը՝ ազատ:

Միւլթարեան միաբանութեան հաղորդագրութիւնից տեղեկանում ենք, որ մեր ժամանակների մեծագոյն հայագէտ, Ստամպուլի համալսարանի պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ արտասահմանեան անդամ Լեւոն Արք. Զեքիեանը Հռոմի Պապի կողմից նշանակուել է Միւլթարեան միաբանութիւնում պապական պատուիրակ: Նրա լիազօրութիւնները սկսել են գործել Յունիսի 1-ից:



Լեւոն Զեքիեանը Թուրքիայի հայ կաթողիկ համայնքի առաջնորդն է, Վենետիկեան ակադեմիայի անդամ, բազմաթիւ գրքերի եւ մենագրութիւնների հեղինակ:

Լիսոփան: Լեւոն Զեքիեանի անմիջական ջանքերով 2015-ին Հռոմի Ֆրանցիսկոս պապը Սուրբ Գրիգոր Նարեկացուն հռչակել է Տիեզերական եկեղեցու վարդապետ:

ԱՅՈ, ՍԱ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ Է

Շարունակուած էջ 6-էն

այդպէս էլ չի արել դա: «Թուրքերի հսկայական մեծամասնութիւնը, որը հրաժարուած է ճանաչել իրենց պատմութեան մութ բիծը եւ ոչ նրանք, ովքեր ձգտում են չիշել ողբերգութեան մասին, պատասխանատուութիւն է կրում այն փնասի համար, որ հասցուել է հայերի եւ ՆԱՏՕ-ի իրենց դաշնակիցների հետ Թուրքիայի շարաբերութիւններին: Գերմանացիները, որոնք իրենց պատմութեան մէջ սարսափելի ցեղասպանութեան են բախուել, ճիշտ են արել՝ անտեսելով էրդողանի սպառնալիքները»:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ

ՓԱՍՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՇՈԳԻԻ ՇԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՇԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ՇԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

THE CULTURAL COMMITTEE OF THE ORGANIZATION OF ISTANBUL ARMENIANS

Presents the Award Winning Movie

THE CUT

SUNDAY, JUNE 12TH, 2016 at 6:00 pm OIA center

For more informations plz call

Dr. Ohannes Kulak Avedikyan@ (818) 800-1976

The Cut is a 2014 internationally co-produced drama film directed by Fatih Akin. It was selected to compete for the Golden Lion at the 71st Venice International Film Festival.^{[1][2]} The film is about the lives and experiences of a young Armenian by the name of Nazareth Manoogian, in the light of the Armenian Genocide and its repercussions in different parts of the world.

Massis Weekly

Volume 36, No. 22

Saturday, JUNE 11, 2016

Germany's Bundestag Overwhelmingly Passes Armenian Genocide Resolution Erdogan Calls Armenian Genocide Recognition 'Blackmail'



Germany's parliament overwhelmingly passed on Thursday, June 2nd, a resolution recognizing the 1915 massacres of some 1.5 million Armenians in the Ottoman Empire as genocide.

"With one vote against and one abstention, this resolution has been passed by a remarkable majority of the German Bundestag," Norbert Lammert, the speaker of the German lower house of parliament, declared after the vote, according to Reuters.

The resolution, titled "Remembrance and commemoration of the genocide of Armenians and other Christian minorities in 1915 and 1916", was drafted by lawmakers representing the main parliamentary factions, including Chancellor Angela Merkel's Christian Democratic Union (CDU). It says the Armenians' fate exemplified "the history of mass exterminations, ethnic cleansing, deportations and yes, genocide, which marked the 20th century in such a terrible way."

It also acknowledges that the

German Empire, then a military ally of the Ottomans, did nothing to stop the killings.

"That we were complicit in this terrible crime does not mean that today we will be complicit in denying it," said Cem Ozdemir, the ethnic Turkish leader of the opposition Green Party and a stronger backer of Armenian genocide recognition.

"Only those who recognize the past can take part in shaping the future," Deutsche Welle quoted Franz Josef Jung, a former German defense minister and a senior CDU lawmaker, as saying. "We want this resolution to revive the process of reconciliation [between Turkey and Armenia]."

Gregor Gysi, a politician from The Left Party, who was critical of Turkey's treatment of the Kurds who were doing an excellent job in fighting Islamic State, said that "Germany was a historical accessory" and has a duty to recognize the mass killings of Armenians in the First World War.

"We need to call this what it was

— a genocide," he told the parliament. "The Bundestag should not allow itself to be blackmailed by Turkey's threats."

According to the Christian Democratic Union's Albert Weiler, Germany had a "historical duty" to recognize the mass killings of Armenians.

"Without this admission there cannot be forgiveness and reconciliation. Suffering does not know temporary boundaries. Genocide will never remain in the past. By recognizing the genocide, it will force the Turkish government to take a brave step and look into its own history," he said.

Although Merkel did not take part in the vote, she did back the genocide resolution in an internal party straw poll earlier this week. "She told me this morning that she sides with her parliamentary group," a spokeswoman for the chancellor reportedly said on Wednesday.

Erdogan: This is 'Blackmail'

Turkish President Recep Tayyip Erdogan called Germany's recognition of the Armenian Genocide "blackmail" during a televised speech Saturday, Agence France-Presse reported.

In his most bitter reaction yet to the vote by the German parliament, Erdogan threatened to leave Europe "to its own worries" if such disputes were not resolved.

"The issue here is not the Armenians.... The Armenian issue is used all over the world as a convenient blackmail against Turkey and has even started to be used as a stick," he said in the televised speech.

"I am addressing the whole world. You may like it, you may not.

Our attitude on the Armenian issue is clear from the beginning. We will never accept the accusations of genocide," Erdogan said. The Turkish president said the Ottoman Empire was under a constant state of attack during 1915-16, and what happened to Armenians in Anatolia was not a coordinated effort led by the government at the time.

Referring to Germany's guilt over the Holocaust, Erdogan scoffed that it was the "last country" to make such accusations.

He added Germany would also be better advised to re-examine the slaughter of indigenous Namibians under the German Empire over a century ago, which Berlin has yet to officially term a genocide.

Erdogan had said in comments published in Turkish newspapers earlier that he wondered how German officials could look Turkey's leaders in the face after the vote in the Bundestag.

He expressed disappointment over conduct of Chancellor Angela Merkel, who stayed away from the Bundestag debate, saying he wished she had taken part "and cast her vote."

"Now I wonder how, after such a decision, German officials will look at me personally and our prime minister in the face," Erdogan said.

Death Threats Against Green Party Leader Cem Özdemir

The leader of Germany's Green Party, Cem Ozdemir, is under police protection following death threats received in the wake of the German Bundestag's vote to recognize the Armenians Genocide, the Die Welt reports.

Continued on page 3

4 Syrian Armenians Killed In Aleppo Shelling



ALEPPO (RFE/RL) -- Four ethnic Armenian civilians have reportedly been killed and dozens of others wounded in Syria's formerly largest city of Aleppo in continuing clashes between Syrian government troops and opposition forces.

According to local Armenian ac-

tivists, they died on Thursday evening when an Armenian-populated government-controlled district of the war-ravaged city was shelled by insurgents. Three of the male victims were said to have been burned to death

Continued on page 3

Iran's Rouhani Again Urges Closer Ties With Armenia

TEHRAN (RFE/RL) -- President Hassan Rouhani reaffirmed Iran's desire to deepen relations with Armenia "in all areas" on Sunday as he oversaw the signing of an Armenian-Iranian agreement on visa-free travel between the two neighboring nations.

Foreign Minister Edward Nalbandian signed the agreement with his Iranian counterpart Mohammad Javad Zarif after holding talks with Rouhani during an official visit to Tehran.

The deal lifted visa requirements for Iranian nationals visiting Armenia and vice versa. The Armenian government gave the green light to the mutual visa waiver on Thursday, saying that it will boost bilateral ties and attract more Iranian tourists to Armenia.

The official Iranian IRNA news agency said the deal signed in Rouhani's presence "is the result of significant progress in Iran-Armenia relations made in the past few months."

"The Islamic Republic President ... called for promotion of ties between the two states in all areas in the post-sanctions era," it said in a separate report on Rouhani's meeting with Nalbandian. "He underlined that Iran and Armenia have similar positions on regional and international developments," it added.

The Armenian Foreign Ministry likewise quoted Rouhani as praising the "strong" Armenian-Iranian relationship and saying that the recent lifting of international sanctions against Tehran opened up new opportunities for it further expansion. The two governments should take "practical steps" to boost bilateral commercial ties, he said, according to a ministry statement.

According to IRNA, Rouhani also reiterated that Iran is seeking to "con-

Continued on page 2

ECRI Calls on Azerbaijan to Stop Hate Speech Against Armenians



STRASBOURG -- The European Commission against Racism and Intolerance (ECRI) today published its new report on Azerbaijan. While progress was achieved in areas such as migration legislation and living conditions of historical minorities, other issues give rise to concern, such as the continued use of hate speech, a crackdown on independent civil society and media, prejudice against LGBT people and discrimination against religious minorities.

ECRI expresses concern about a wide ranging crack-down on independent civil society and media. As a result, vulnerable groups can no longer turn to NGOs for assistance in cases of racism, hate speech and discrimination.

“Political leaders, educational institutions and media have continued using hate speech against Armenians; an entire generation of Azerbaijanis has now grown up listening to this hateful rhetoric. Human rights activists working inter alia towards reconciliation with Armenia have been sentenced to heavy prison terms on controversial accusations and there are big concerns that hate speech provisions have been misused against the Talysh minority,” the report reads.

“The authorities should ensure that public officials at all levels refrain from hate speech towards Armenians and create adequate conditions for the development of a diverse and independent civil society,” it continues.

“An entire generation of

Azerbaijanis has now grown up listening to constant rhetoric of Armenian aggression. According to a 2012 survey, 91% perceived Armenia as Azerbaijan’s greatest enemy.”

ECRI reiterates its recommendation that the Azerbaijani authorities ensure that public officials at all levels refrain from hate speech towards Armenians.

“Even though no violent hate crime based on ethnic affiliation has been registered in Azerbaijan during the last five years, political leaders, educational institutions and media have continued spreading hate speech. The pardon, release and promotion in 2012 of Ramil Safarov, who had been sentenced in Budapest to life imprisonment for the murder of an Armenian army officer, contributes to a sense of impunity for the perpetrators of racist crime. The report recommends that authorities put an end to the constant, mediatised use of hate speech, and rather promote mutual understanding and confidence,” the report says.

ECRI is a human rights body of the Council of Europe, composed of independent experts, which monitors problems of racism, xenophobia, antisemitism, intolerance and discrimination on grounds such as “race”, national/ethnic origin, color, citizenship, religion and language (racial discrimination); it prepares reports and issues recommendations to member States.

Majority of Germans Support Bundestag Resolution on Armenian Genocide



BERLIN -- The vast majority of Germans support their parliament’s recognition of the 1915 mass killings of Armenians as genocide and do not trust Turkey’s government, according to opinion polls commissioned by German media.

A survey for ARD television, Germany’s largest public broadcaster, showed that 74 percent of them agree with the term “genocide” to describe the massacres.

Reuters cited the findings of the poll shortly after the German parliament, the Bundestag, passed on Thursday a resolution that uses the politically sensitive word in reference to up to 1.5 million Armenians massacred during the First World War.

According to another survey cited by the “Der Spiegel” magazine, 91 percent of Germans do not regard Turkish President Recep Erdogan as a trustworthy partner of Germany, a 12 percent increase from April.

Erdogan and his government strongly condemned the Bundestag resolution after its overwhelming approval by lawmakers representing Germany’s leading political parties. Successive Turkish governments have maintained that the last rulers of the Ottoman Empire did not seek to exterminate its Armenian population.

Germany is home to an estimated

3.5 million Turks. Many of them also strongly oppose the genocide resolution, saying that it will have negative consequences for the already complicated German-Turkish relationship, according to “Der Spiegel.”

Gökay Sofuoğlu, Chairman of the Turkish Community in Germany, dismissed the resolution as “useless.” “Legally and historically the issue has not been sufficiently discussed. Experts on both the Armenian and Turkish sides will continue to prove that the other side is wrong,” Sofuoğlu said.

“There are already angry protests in Turkey, but the atmosphere there tends to change quickly,” Yetvart Danzikyan, a Turkish-Armenian journalist, told the German paper “Die Tageszeitung.” “In my independent opinion, however, it is always good to speak openly about the truth.”

“The more German historical archives are examined and publicized, the harder it will become for the Turkish government to maintain its position of denying the genocide,” he said.

Danzikyan also said Germany could play a bigger role in establishing the historical truth and helping to normalize relations between Armenia and Turkey. He suggested that German Chancellor Angela Merkel “contribute to the launch of an international mediation mission between Armenia and Turkey.”

Czech President to Call on Government and Parliament to Recognize Armenian Genocide



President of the Czech Republic Milos Zeman will ask the Government and Parliament to officially recognize the massacre of Armenians by Turks as genocide.

“I expressed my stance on the Armenian Genocide, when the President of Armenia, Serzh Sargsyan, was

visiting Prague in 2014,” President Zeman said in an interview with ParlamentniListy.cz.

The President said he will reiterate the position during his state visit to Armenia. “But more steps are needed, and after my talks in Armenia I’ll call on the Czech Government and

Iran’s Rouhani Urges Closer Ties With Armenia

Continued from page 1

nect the Black Sea to the Persian Gulf through Armenia.” The Iranian leader discussed the matter with President Serzh Sarkisian in a phone call in January.

Armenian Transport Minister Gagik Beglarian said after visiting the Iranian capital later in January that Yerevan and Tehran are considering creating a new transport corridor that would connect India to Europe via their territories. Beglarian said they believe that cargo shipments can be carried out through the Persian Gulf, Iran, Armenia, Georgia and the Black Sea.

Nalbandian was reported to as-

sure Rouhani that the Armenian side is ready to “draw up and implement new, more ambitious projects” with the Islamic Republic.

The Foreign Ministry statement said Nalbandian also briefed the Iranian president on recent developments in the Nagorno-Karabakh conflict. He praised Tehran’s “balanced position” on the dispute.

Iran was quick to express serious concern at the April 2 outbreak of heavy fighting in and around Karabakh. Iranian Defense Minister Hossein Dehqan urged an immediate end to the hostilities when held separate phone talks with his Armenian and Azerbaijani counterparts on April 3.

Parliament to follow the example of the German Bundestag,” he stated.

The President recalled that the Armenian Genocide has been recognized not only by Germany, but also a number of other countries, including France, Russia,

Poland, Slovakia, Italy and others.

President of the Czech Republic Milos Zeman has arrived in Armenia for a two-day state visit today at the invitation of Armenia’s President Serzh Sarkisian.

Roman Catholic, Greek Orthodox and Armenian Churches Work Together to Renovate Christ's Tomb



JERUSALEM -- For the first time in two centuries, restoration work has begun on the Tomb of Jesus in the Church of the Holy Sepulchre in Jerusalem.

The Armenian, Greek Orthodox and Catholic Churches, the three Christian denominations that look after different parts of the sacred site, have put aside their differences that have caused some delays in the work being carried out. They are working jointly to restore the Edicule, or chamber, which is directly above the place where many believe that the body of Christ lay for three days after the Crucifixion. It is the first such work at the tomb since 1810, when the shrine was restored and given its current shape following a fire.

The chamber had become so precarious that the Antiquities Authority of Israel declared it unsafe last year and it was closed briefly.

Rev. Samuel Aghoyan of the Armenian Church said: "We equally decided the required renovation was nec-

essary to be done, so we agreed upon it."

According to Dr Antonia Moropoulou, a professor of chemical engineering at the National Technical University of Athens, who led the scientific study on the tomb, it has been damaged by many years of exposure to humidity from the condensation from the breath of visitors, and thermal stress caused by candles burning for hours nearby. The tomb could also be vulnerable to an earthquake, she said.

Candle fumes have also caused deposits that damage the marble and caused chemical reactions that lead to further damage.

The £2.3 million restoration is expected to be finished in 2017, seven decades after the British first constructed the metal frame at the site, but it will remain open to pilgrims throughout.

King Abdullah of Jordan has also made a donation. Jordan controlled the Old City until the 1967 war and is still involved in looking after its Christian and Muslim holy sites.

Germany's Bundestag Overwhelmingly Passes Armenian Genocide Resolution

Continued from page 1

"We are thoroughly used to abuse and insults, but we have never experienced such a high number of death threats," the head of Ozdemir's office Marc Berthold told Die Welt.



Germany's Green Party leader Cem Ozdemir

Green Party leader Ozdemir, a German-Turk, was one of the people who initiated the voting of the resolution and he stated that, "Germany's complicity to the genocide doesn't mean that we should support the ones who

deny the genocide today."

Ozdemir said that extremists were not unique to Germany. "Right-wing radicalism is not a German privilege. Unfortunately it also exists in Turkey and among German Turks."

Most death threats come from Turkish nationalists. "I will come to Germany and kill you," one man tweeted. Another tweet reads: "We should honor this loose assimilated German Cem Ozdemir with a shot in the head."

Turkish President Recep Tayyip Erdogan also criticized Ozdemir. "And who is the leader of this scandalous development? I won't say from which city he is, because there are people who are from the same city right now. They would be upset. He is from Turkey, but I cannot call him "Turk". Why? Because someone who has Turkish blood cannot accuse this nation for genocide."

The Berlin police have increased their presence around Ozdemir's flat and all threats, whether they arrive with flyers, mail, e-mail or Twitter, are now forwarded by Ozdemir office directly to the Federal Criminal Police Office of Germany and analyzed there.

Armenia's First Smartphone Goes on Sale

YEREVAN (EurasiaNet) -- Armenia's first-ever smart phone arrived in stores on June 6, as the latest result of the country's ongoing ambition to become the South Caucasus' high-tech capital.

The debut of Armphone, a touchscreen, Android cell phone, made Armenia the second ex-Soviet republic after Russia to foray into the smartphone-manufacturing industry. The maker, a joint American-Armenian venture, Technology & Science Dynamics (TSD), has created an Android-run tablet, too, called Armpad.

Armphone features a 5.1-inch, full HD-screen and a price for between \$100-\$300, depending on features, according to one news report. (TSD itself does not specify a retail price.)

The combination of an affordable price and national pride makes the manufacturers confident of sales success. TSD used the motto "It is time for Armenian products" in its promotion for the phones, which, it claims, "will satisfy the pickiest of customers."

"The buyers will be pleasantly surprised by the choice of ringtones based on music pieces by famous Armenian composers," the company said.




A country of some 3.3 million, Armenia has been banking heavily on developing a high-tech industry to jumpstart its modest, predominantly agricultural-and-service-based, \$10-billion economy.

Between 2008 and 2013, EurasiaNet.org found, Armenia's IT industry grew at a rapid, 22-percent-per-year rate, to account for roughly five percent of the national economy in 2015, RFE/RL reported. Supported by the government, donor aid and private investment, the \$550 million industry features both subsidiaries of international corporations and local startups.

Noubar Afeyan Elected to MIT Board of Trustees

On June 2, AGBU Central Board Member Noubar Afeyan was elected to the Board of Trustees of the Massachusetts Institute of Technology (MIT). Afeyan, along with the nine other term members elected this year, will serve for five years, effective July 1. He will add his expertise to the 76 distinguished leaders in education, science, engineering and industry already serving the MIT Board of Trustees.

Afeyan, elected to the AGBU Central Board of Directors in 2012, earned his PhD in biochemical engineering from MIT, and has authored numerous scientific publications and patents. He is the founder and CEO of Flagship Ventures, a leading early-stage, life-science venture firm managing funds exceeding \$1.4 billion. In his 30-year career, Afeyan has co-founded more than 38 life-science and technology startups, and is currently director or chair of several private and public company boards. Additionally, he co-



founded the National Competitiveness Foundation of Armenia, the UWC Dilijan International School, the Noubar and Anna Afeyan Foundation, and the Aurora Prize for Awakening Humanity. He also served as chair of the World Economic Forum's Global Agenda Council on Chemicals and Biotechnology and its Emerging Technologies Council. Since 2000, Afeyan has been a senior lecturer at the MIT Sloan School of Management.

4 Syrian Armenians Killed In Aleppo Shelling

Continued from page 1

inside a small workshop that caught fire, while the fourth man was killed by a rocket moments later.

Zarmig Boghigian, the editor of the Aleppo-based Armenian magazine Kantsasar, said the shelling lasted for two hours, leaving several dozen other Syrian Armenians wounded.

"Last past night was really bad. Armed terrorist groups fired around 40 rockets and gas tanks within two hours," Boghigian told RFE/RL's Armenian service (Azatutyun.am) by phone. The gunfire seriously damaged an Armenian church and a school, she said.

Boghigian claimed that the Armenian-populated Nor Kyugh district was deliberately targeted by "pro-Turkish" rebels.

"Kantsasar" reported earlier that an Armenian nursing home in Aleppo was shelled and partly destroyed last week. It said one Syrian Armenian, a woman, was killed and two others wounded as a result.

Aleppo was home to the majority of an estimated 80,000 ethnic Armenians who lived in Syria until the outbreak of the bloody civil war five years ago. Only up to 10,000 of them reportedly remain in the war-ravaged country now. Many are said to be unable to flee the war zone or simply have nowhere to go.

AGBU #Help Artsakh Campaign Raises \$325,000



NEW YORK -- Since the four-day war in Nagorno-Karabakh in April, AGBU worldwide fundraising efforts, individual donors and a special allocation by the AGBU Central Board of Directors have raised more than \$325,000 for the people of Armenia, Nagorno-Karabakh and their armed forces. After large scale military attacks by Azerbaijan and the continuing security threats it poses to Armenia and Nagorno-Karabakh, there is a dire need for a unified and reinforced commitment by Armenians worldwide. AGBU has reaffirmed its unwavering support to the people and armed forces of Armenia and Nagorno-Karabakh and brought urgent support to the families of fallen soldiers, injured soldiers and innocent civilians.

On May 13, the AGBU Armenia team visited severely injured soldiers and volunteer fighters at the Central Clinical Military Hospital and the Rehabilitation Center of the Armenian Red Cross Society in Yerevan. The team also visited the homes of discharged soldiers and families of fallen soldiers in the regions of Shirak and Ararat to deliver \$1,000 to each family.

agbu-nkr-campaign01 On May 21 and 22, AGBU Armenia visited Nagorno-Karabakh, including the Military Hospital in Stepanakert and the homes of fallen soldiers in the regions of Martakert, Martuni and Hadrou, providing families in need with \$1,000 of financial assistance. AGBU Armenia Deputy Director Hovig Eordekian met with Arayik Harutunyan, Prime Minister of Nagorno-Karabakh, and

introduced AGBU's campaign directions, which include the purchase of medical equipment and supplies, financial assistance to the families of fallen and injured soldiers and support to displaced families.

"After returning to Yerevan, we will immediately start a very important phase of our campaign, which entails purchasing medical equipment and assisting our military. The list of equipment was identified by the Defense Ministries and prioritized by the medical divisions of the military. It will include emergency and intensive care equipment as well as hemostatic agents and portable x-rays. We believe that this equipment will help save the lives of soldiers on the frontline," said Eordekian.

Since the beginning of April, AGBU Armenia has provided support to more than 70 displaced Armenians, including 30 children, by hosting them at the Nairi Hotel in Stepanakert, where AGBU Nagorno-Karabakh program coordinator Sassoun Baghdasaryan has been overseeing this project and delivering financial assistance to 21 families of injured and fallen soldiers.

To ensure its resources are correctly allocated, AGBU began coordinating its programs with Armenian governmental agencies as well as other organizations that have initiated fundraising campaigns. As a result of these efforts, AGBU Yerevan, Repat Armenia, Sahman and the Arar Foundation created a Coordination Group, a growing network that meets regularly to share experiences and recommendations.

New Executive Committee Elected at Ararat Home of Los Angeles



MISSION HILLS – As is customary every year following its annual membership meeting, the Ararat Home Board of Trustees recently elected its new executive committee. The committee members are Michael Surmeian as Chairman, Ron Nazeley as 1st Vice Chair, Nora Hampar as 2nd Vice Chair, Debbie Avedian as Secretary, Vahe Vartanian as Treasurer, Arthur Zabounian as Assistant Secretary, and Gary Kaloostian as Assistant Treasurer. Each of them has served on the Board for several years.

Upon his election as Chairman, Mr. Surmeian thanked trustees for their support and confidence and conveyed his commitment to the mission of the Home and his optimism for continued growth. He gave special thanks to outgoing Chairman Joseph Kanimian for his leadership in guiding the Home to new heights of excellence as other past chairmen have. He acknowledged the love the executive committee members share for the Home and its residents. He recognized the dedication of employees and volunteers and expressed his heartfelt gratitude for the support Ararat Home receives throughout the community.

In his turn, Mr. Kanimian congratulated Mr. Surmeian on his new responsibilities and expressed his utmost trust and confidence in his abilities to continue leading Ararat Home to further achievements for the benefit and care of its precious residents.

The Home has continuously been recognized for the exemplary service and care it provides its over 350 residents. The chairman said, "These positive results don't happen by accident; they happen because of the tireless training and the hard work done day-in-and-day-out as well as the love given to our residents by our employees who are capably led by our administrators and Chief Operating Officer. And, with continued support, we owe it to the Armenian community to bring the *Ararat Home Experience* to as many of our mothers and fathers as we can."


The Home enjoys sustained support from its several guilds and Ladies Auxiliary, the Armenian Church and community-wide organizations, and from members of the community at large. Ararat Home relies heavily on donations in order to deliver this outstanding service to our community.

Author Aris Janigian to Present New Novel at Abril Bookstore

GLENDALÉ – Author Aris Janigian will present his new novel, "Waiting for Lipchitz at Chateau Marmont" in a special conversation with local actor/comedian Lory Tatoulian on Thursday, June 23, 2016 at 7:30pm at Abril Bookstore - 415 E. Broadway, Glendale, CA. Admission is free with reception to follow.

"Waiting for Lipchitz at Chateau Marmont" is set in two iconic locales—Hollywood's legendary Chateau Marmont and Fresno's amazing Forestiere's Underground Garden. A bold and colorful critique of the California Dream through the perspective of screenwriter who has gone from riches to rags. A kind of Hollywood version of Waiting for Godot, Janigian's Lipchitz is a stunningly original take on the absent protagonist and what is illuminated in the void.

Aris Janigian is author of three previous novels, Bloodvine, Riverbig, and This Angelic Land. A Ph.D. in psychology, from 1993 to 2005 he was senior professor of Humanities at Southern California Institute of Archi-



ecture. He has published in genres as diverse as poetry, social psychology, and design criticism. He was a contributing writer to West, the Los Angeles Times Sunday Magazine, a finalist for the William Saroyan Fiction Prize, and the recipient of the Anahid Literary Award from Columbia University.

Presented by Abril Bookstore.



MEHER BABIAN, D.D.S.
General Dentistry

1111 S. Glendale Avenue
Suite 206
Glendale, CA 91205

Tel: (818) 547-0884
Tel: (818) 547-1476

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD

SERVING BATON ROUGE SINCE 1979

ԵՐՏՈՂԱՆ-ՏԱՌՈՒԹՅՈՂՈՒ ԶՈՒԳԵՐԳԻ ՎԵՐՋՆ



ՀԱՄԱՐԱՐՁՈՒՄ ԱՂՊԱՇԵԱՆ

Վերջապէս հասաւ այն ժամը, երբ պէտք էր, որ Թուրքիոյ նախագահ Ռեջեփ Թայիփ Էրտողան խզէր իր քաղաքական կապերը եւ վերջ տար իր սին յարաբերութիւններուն նախկին վարչապետ Ահմետ Տաւութօղլուի հետ:

Էրտողան եւ Տաւութօղլու, թէեւ նոյն իսլամ-արմատական Արդարութիւն եւ բարգաւաճում կուսակցութեան պարագլուխներէն էին, քաղաքական հարցերու վերաբերեալ ունին տարբեր մտայնումներ, որոնցմէ գլխաւորն է Թուրքիոյ ապագայի դիրքը՝ իբրեւ պետութիւն:

Բացայայտ է, որ Էրտողան կը ձգտի նոր Օսմանեան կայսրութիւն մը վերահաստատելու՝ արմատական թուրքերու աջակցութեամբ, անոնց յիշեցնելով իրենց մեծ հայրերուն սիրագործութիւնները (վերջերս թուրքերը տօնեցին օսմանական բանակի յաղթանակը անգլիական բանակին դիմաց Իրաքի Քուէթ քաղաքին մէջ, 1916ին, Համաշխարհային Ա. պատերազմին ընթացքին): Իսկ Տաւութօղլու իր խորամանկութեամբ, իսբեբայութեամբ եւ շարաշահութիւններով կը ծրագրէ արդի հզօր Թուրքիա մը ունենալ: Երկու պարագաներուն ալ, նպատակը Թուրքիան մեծ դերակատար ընելն է աշխարհի եւ ի մասնաւորի Միջին Արեւելքի առօրեայ եւ ապագայ քաղաքականութեան մէջ:

Էրտողան (62տարեկան) հասակ առած է թուրք իսլամ ընտանիքի մէջ. իր նախնական ուսումը ստացած է կրօնական «Իմամ Հաթիփ» դպրոցէն, ուր եւ խմորուած են իր իսլամական ծայրայեղական սկզբունքները: Ապա աւարտած է «Աքարա» ի դպրոցը, (այժմ՝ «Մարմարա» համալսարան), սոստեմատիվութեան եւ առեւտրական գիտութիւններու բաժինէն: Նախ անդամակցած է Ազգային փրկութիւն կուսակցութեան, ապա՝ 1980ին՝ իսլամական բարօրութիւն կուսակցութեան: Բանտարկուած է իսլամութեան գործօն ջատագով մը ըլլալուն համար. անոր նախընտրած լոգունն է՝ «Մզկիթները մեր գործնոցներն են, զմբէթները՝ մեր սաղաւարտները, մինարէթները՝ մեր հաւատարիմ գիտորները»: 2001ին եղած է Արդարութիւն եւ բարգաւաճում կուսակցութեան հիմնադիրներէն մէկը, 1994-98՝ Պոլսոյ քաղաքապետ, ապա 2003-2014՝ Թուրքիոյ վարչապետ: Ներկայիս Թուրքիոյ նախագահն է եւ կ'երթայ ըլլալ նոր ժամանակներու Թուրքիոյ ֆէսով սուլթանը:

Տաւութօղլու (57 տարեկան) իր ուսումը ստացած է Պոլսոյ Գերմանական միջազգային դպրո-

ցէն (German International school), ապա շրջանաւարտ եղած է «Պողոզիչի» համալսարանի տնտեսագիտութեան եւ քաղաքագիտութեան բաժինէն. շարունակելով նոյն համալսարանի հանրային վարչութեան (Public Administration) բաժանմունքը՝ ստացած է իր մագիստրոսի աստիճանը, ապա նաեւ՝ դոկտորի կոչումը, նոյն համալսարանի քաղաքական գիտութիւններու եւ միջազգային յարաբերութիւններու բաժինէն: Եղած է ուսուցչապետ եւ փրոֆեսօր-դասախօս նոյն համալսարանին մէջ:

Հոս, արդէն իսկ շատ պարզ է, որ Էրտողան եւ Տաւութօղլու, թէեւ երկուքն ալ՝ իսլամական սկզբունքներու եւ մտայնութեան տէր մարդիկ, սակայն տարբեր հեռանկարներ ունին:

Էրտողանի վարչապետութեան շրջանին, Տաւութօղլու եղած է անոր խորհրդատուն (2003-2009), ապա՝ երկրի արտաքին գործոց նախարարը (2009-2014): 2014ին, երբ Էրտողան նախագահ ընտրուեցաւ, Տաւութօղլու դարձաւ երկրի վարչապետ: Կը թուի, թէ «գալլ» Էրտողանը, «աղուէս» Տաւութօղլուի գաղափարներէն օգտուելով՝ ուզած է իր մութ ծրագիրները թաքուն պահել, մանաւանդ՝ Եւրոպայի աչքերէն. իսկ Տաւութօղլու, Էրտողանի քաղաքական համբաւէն եւ դիրքէն օգտուելով՝ բարձրացած է քաղաքականութեան աստիճանները, եւ ահաւասի՛կ, ժամանակը եկած է, որ իւրաքանչիւրը իր ճամբան շարունակէ առանձին: Որքա՞ն երկար ճամբայ պիտի կրնային միասին երթալ գալլը եւ աղուէսը...

Էրտողան դէպի բացարձակ իշխանութեան իր երթը կը շարունակէ, ինչպէս կը նշէ թուրք գրող Մուսթաֆա Աքէօլ «Մոնիթոր» ելեկտրոնային կայքին վրայ՝ աւելցնելով, թէ «Տաւութօղլու կրնայ անոր խոչընդոտներէն մէկը ըլլալ. Տաւութօղլու իր կամքով չհրաժարեցաւ, այլ ըսաւ, թէ ինք անհրաժեշտութենէ մեկնելով այդ քայլին դիմեց, սակայն ամբողջ Թուրքիան գիտէ, թէ ի՛նչ կը նշանակէ այդ անհրաժեշտութիւնը»: Յայտնի բան է, որ Տաւութօղլու ճամբայ դրուեցաւ:

Արդարութիւն եւ բարգաւաճում կուսակցութեան Օգոստոս 2014ի ընտրութիւններուն, Էրտողան նախընտրեց Տաւութօղլուն՝ Ապտուլլահ Կիլիփի փոխարէն, որովհետեւ վերջինս աւելի ազատամիտ եւ պարկեշտ կը համարուէր: Այդպիսով, Տաւութօղլու ընտրուեցաւ կուսակցութեան նախագահ եւ դարձաւ վարչապետ: Ան կրկին անգամ կուսակցութեան պարագլուխ ընտրուեցաւ ու վարչապետի պաշտօնը ստանձնեց, երբ Նոյեմբեր 2015ին

Չայիշախիչ յաղթանակ արձանագրեց՝ Էրտողանի օժանդակութեամբ, բայց եւ այնպէս, Մայիս 5, 2016ին, ծունկի բերուեցաւ՝ իր հրաժեշտի ելոյթը ունենալու համար:

Ինչո՞ւ... Որովհետեւ այս անգամ Տաւութօղլուն էր, որ շատ ազատամիտ կ'երեւէր, իսկ Էրտողանի համբերութիւնը արդէն իսկ հատած էր. քաղաքական անցուդարձերը շատ արագ փոփոխութիւններու ընթացքի մէջ են, եւ պէտք էր նշանակուէր նոր վարչապետ մը, որ կրնայ ներդաշնակ ըլլալ Էրտողանի հետ եւ գործադրէ իր Փանթուրանական ծրագիրները:

Թրքական մամուլը Տաւութօղլուի մեկնումին մասին քանի մը անգամ անդրադարձած է արդէն ամիսներ առաջ, իսկ Էրտողանի համակիր խմբակ մը վերջերս նշեց, թէ Տաւութօղլու դաւաճանած է Էրտողանին՝ համագործակցելով արեւմտեան երկիրներու եւ անոնց գործակալներուն հետ՝ երկրի դեկավարին դէմ:

Յունիս 7, 2015ի ընտրութիւններէն ետք, երբ Արդարութիւն եւ բարգաւաճում կուսակցութիւնը չկրցաւ մեծամասնութիւն ապահովել խորհրդարանին մէջ, Տաւութօղլու աշխատեցաւ միատեղ կառավարութիւն մը կազմել գլխաւոր ընդդիմադիր Հանրապետական ժողովրդային կուսակցութեան հետ: Ան նաեւ Էրտողանին հակառակ դիրք որդեգրեց մտաւորականներու եւ լրագրողներու արգելափակութեանց ու այլ հարցերով, եւ փորձեց երեւիլ համեմատաբար Էրտողանէն աւելի պարկեշտ ու նուազ մենատիրական մոլուցքով. այդ քայլերով, Տաւութօղլու աւելի ընդունելի դարձաւ ընդդիմադիր շրջանակներէն ներս. իսկ Էրտողան այդ մէկը դաւաճանութիւն նկատելով՝ պէտք էր Տաւութօղլուն ճամ-

բայ դնէր... եւ դրուեցա՛ւ:

Իբրեւ վարչապետի պաշտօնի թեկնածուներ առաջադրուած էին Պիրաթ Ալպայրաքը՝ ուժանիւթի նախարարն ու Էրտողանի աղջկան 38 տարեկան ամուսինը, որ սակայն անփորձ է, Պինալի Եըլտըրըմը՝ փոխարութեան նախարար, 61 տարեկան, հարուստ փորձառութեամբ, սակայն ոչ շատ ուժեղ անձնաւորութեան տէր անձ մը, Պեքիր Պոգտաքը՝ արդարութեան նախարար, 51 տարեկան, ոչ մեծ համբաւի կամ ուժեղ անձնաւորութեան տէր անձ, սակայն՝ Էրտողանի հլուհնազանդ բարեկամ. կար նաեւ պաշտպանութեան նախարարը՝ 55 տարեկան Իսմայիլ Եըլմազը: Ո՛վ վարչապետի պաշտօնը ստանձնէր, Էրտողանի խորհրդատուն պիտի դառնար եւ ոչ թէ որոշում առնող մը: Հոս յիշենք, որ վերջերս արդէն իսկ երկրի վարչապետ նշանակուեցաւ Պինալի Եըլտըրըմը:

Սակայն այդ բոլորը տակաւին պիտի չիրականացնեն Էրտողանի մենատիրութեան երազները. ան պիտի ձգտի երկրի սահմանադրութիւնը փոխելու եւ նախագահական համակարգ հաստատելու: Հետեւաբար, ան երեսփոխանական մեծամասնութեան կարիքն ունի երկրի սահմանադրութիւնը փոխելու համար, եւ այդ մէկը կրնայ ունենալ, եթէ՛

1- Համագործակցի Ազգայնական շարժում կուսակցութեան եւ անոր նախագահ Տեւրէթ Պահչեքիի հետ:

2- Ձերբակալէ քանի մը տասնեակ քիւրտ երեսփոխաններ՝ ահաբեկչութեան պատրուակով, եւ սահմանափակ ընտրութիւններ կատարէ:

3- Ընդհանուր ընտրութիւններու կոչ ուղղէ, երբ գագայ, թէ ինք

Շար.բ էջ 19

The Credit Repair Specialist
Enrich Financial
Գլխաւոր Տնօրէն՝ Արիան Եղբայի

Մենք կ'արձրացնենք Ձեր Credit Score-ը

100% Legal

Մենք հաջողութեամբ կ'արոյր ենք հեռացնել հետեւյալ կետերը՝

- Late payment Collection
- Charge off Bankruptcy
- Foreclosure Chexsystem
- Judgment Tax lien
- Repossession Inquiries

Let us REMOVE your Experian Inquiries for FREE *

Experian

818-858-0060
www.enrichfin.com

*Some restrictions apply

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԽՂՇԻ ՈՒ ՆՈՒՐԲ ԱՐԺԷՔՆԵՐՈՒ ԶԱՅԵԼԻ ՄԸ

Մտորումներ Պէպօ Սիմոնեանի «Գրականութեան Գամբուն Վրայ» գիրքի շնորհահանդէսին առթիւ

ՀՐԱՉ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

Պէպօ Սիմոնեանին հետ իմ «մտաւորական» յարաբերութիւնս եւ երկար տարիներու վրայ երկարող գրողներս կարելի է ըսել սկսան 16 տարեկանին՝ երբ ինծի նուիրեց «Հայկական Մանրանկարչութիւն» Հայաստան տպուած գեղեցիկ լալպոմ գիրքը - կողքին վրայ թորոս Ռոսսլինի (13րդ դար) պատկերած հրաշալի Աւետու մի մանրանկարով-որուն մէջ մակագրած էր՝ «Նուէր Հրաչ Չիլին կիրեանին, Հայ Արուեստի հանդէպ իր ցոյց տուած հետաքրքրութեան որպէս գնահատանք»: Իսկապէս՝ Պէպօ Սիմոնեանը երկտասարդներուն մէջ մշակոյթի կայծը անուցանելու բացառիկ տաղանդ եւ համբերութիւն ունէր:

Բառին իսկական առումով մարդ էր՝ իր բարոյական ու հոգեմտաւոր նուրբ արժէքներով, որոնք իր հոգեմտական աշխարհ-ընկալումին խարիսխն էին: Առատորէն սերմանեց համամարդկային, ազգային ու մշակութային կենսական արժէքները մանաւանդ պատանիներու եւ երկտասարդներու հանդէպ ունեցած իր յատուկ մօտեցումով, որոնց կազմաւորող իմացական պարարտ հողին մէջ մշակոյթի, գիրի ու գրականութեան հանդէպ սէր ցանեց: Պէպօ Սիմոնեան աչք քիչերէն էր մեր ազգային կեանքին մէջ, որ լրիւ իմաստով կենսագործեց սէրը հանդէպ հայրենիքին, ընտանիքին, սերունդներ դաստիարակելու սրբազան պարտականութեան, համազգային շահերու եւ իրաւունքներու պաշտպանութեան, համայնքային կեանքի մտաւոր ու մշակութային զարգացման, գրական մշակոյթի ու արուեստի, եւ մանաւանդ հոգին ու միտքը ազնուացնող սկզբունքներու տարածման:

Որպէս իր կրտսեր գրուցակիցը, կրնամ ըսել որ իր հասարակական ու ազգային ծառայութեան եւ կեանքի ողջ ընթացքին՝ Պէպօ Սիմոնեան եղաւ մարդկային իղձի ու անկեղծ հայրենասիրութեան հայելի մը՝ կանգնած հազարաւոր աշակերտներու, դաստիարակներու, գործիչներու, ժողովականներու եւ իր հետ շփում ունեցող բոլոր մարդոց դիմաց: Այսօր ֆիզիքապէս հեռացած է մեզմէ, բայց իր բազմակողմանի տիպարը՝ գրական իր թողած ժառանգութեան առընթեր, տակաւին շատ պատգամներ ունի տալիք:

Վերջին տասնամեակներուն ազգային օրակարգի նիւթ դարձած արեւմտահայերէնի կենսունակութեան խնդիրը մեր խօսակցութիւններուն ընթացքին մնայուն մտահոգութիւններէն մին էր: Ինք հարցերը կը դիտէր որպէս ուսուցիչ, դաստիարակ, մշակութային գործիչ եւ գրող, եւ ունէր լուրջ մտահոգութիւններ, իսկ ես որպէս ընկերաբան, որ հետաքրքրուած է ինքնութեան եւ մշակոյթի խնդիրներով, մանաւանդ սփիւռքեան իրականութեան մէջ:

Պէպօ Սիմոնեանին հիմնական մտահոգութիւնները եւ տեսակէտները տեղ գտած են «Գրականութեան Ճամբուն Վրայ» իր վերջին գիրքին մէջ: «Հայ լեզուի նահանջը ակնհայտ է» երբեմնի Սփիւռքի սիրտը նկատուող Միջին Արեւելքի մէջ նաեւ, կ'ըսէ ան, ու կ'աւելցնէ. «Տխուր է հաստատել, բայց

ճշմարտութիւն ըլլալէ չի դադրիր, որքան շատ է թիւը այն հայ ընտանիքներուն, ուր ոչ մէկ հայերէն թերթ, ոչ մէկ հայերէն գիրք ու հրատարակութիւն մուտք կը գործեն...: Հայ լեզուի պահպանման մէջ հայ դպրոցի ապագան եւս մութ տեսնողներ կան: Կարծես իրաւացիօրէն: Առաջին հերթին հայերէն լեզուի ուսուցիչներու պարագան է ապագայի հեռանկարով»:

Նման մտահոգութիւններ աւելի լայն տեսողաշար վրայ դիտել տուած է Արամ Ա. Վեհափառը՝ 2007 տարին հայ լեզուի տարի հռչակման իր կոնդակին մէջ, ուր կ'ըսէ. «Հայ մամուլի էջերուն վրայ կ'աղաղողի հայ լեզուն: Հայերէն լեզուի թէ՛ գրաւոր գործածութեան մէջ ահաւոր սխալներ կը կատարուին, նոյնիսկ երբեմն հայերէն լեզուի ուսուցիչներու, մտաւորականներու ու մամուլին կողմէ: Հայ լեզուի ճիշդ գործածութիւնը սկսած է նահանջել: Այս մտահոգիչ երեւոյթին առաջը պէտք է առնել ամէն գնով ու կարելի փութով»:

Լեզուի իմացութեան բազմակողմանի խնդիրներուն առընթեր, նման գիրքի մը շնորհահանդէսին նուիրուած այս հաւաքին պատեհ առիթ է նոյնքան կարեւորութեամբ նայիլ լեզուի հարցի մետալին միւս երեսին՝ այսինքն լեզուի «միջնորդին» - գրողին, մտածողին ու ստեղծագործողին, որ լեզուն «սքանչելի» կը դարձնէ: Այսօր «միջնորդը» կ'ապրի այնպիսի պարտականի մը մէջ ուր կան պարտադրուած քաղաքական, ընկերային, տնտեսական ու արուեստագիտական իրականութիւններ եւ հանգամանքներ, որոնք ազդեցութիւն ունին թէ՛ ստեղծողին վրայ եւ թէ՛ լեզուին կենսունակութեան վրայ: Հարցերու շարքին կարելի է նշել Սուրբիոյ մէջ համայնքային կառուցներու քանդումին հետեւանքները, հայախօս գաղութներու ցրուումը, նիւթական միջոցներու պակասը, եւայլն: Ասոնցմէ գատ, կան անշուշտ թուայնացուած, արագ ընթացող ու զարգացող դարաշրջանի մը մէջ ապրելու թէ՛ նարաւորութիւնները եւ թէ՛ մարտահրաշքները՝ օրինակ հասարակաց գօտաւորումի (coding) համակարգի մը բացակայութիւնը, նոր բառեր ստեղծելու խնդիրը, հասարակական ցանցերը եւ այլ գործնական հարցեր:

Ծրագրային եւ գործնական գործօններէն անդին, գալիք տասնամեակներուն արեւմտահայերէնի կենսունակութիւնը պայմանաւորուած է արեւմտահայ մշակոյթ արտադրող (ստեղծող) ու սպառող վճռական զանգուածի մը գոյութեամբ (critical mass): Այսինքն՝ յետ-արդիական ներկայ համաշխարհայնացուած սփիւռքեան կեանքին մէջ լուրջ թիւով գրողներ, մտաւորականներ, գրական ու մշակութային ստեղծագործողներ, մամուլի իմբապիւրներ ու գործիչներ, հրատարակիչներ ու անոնց ստեղծած մշակոյթն ու մտածողութիւնը սպառողներ - մէկ խօսքով՝ արեւմտահայերէնով մտածողներ, խօսողներ, կարդացողներ եւ արտադրողներ: Ի դէպ՝ «վճռական զանգուած» եզրը UCLA համալսարանի հայագէտ Յակոբ Կիւլիւճեանի առաջադրութիւնն է: Պատմական պարունակին մէջ դիտուած, ինչպէս վահէ Օշական

դիտել տուած է՝ նման վճռական զանգուած մը գոյութիւն ունէր Յեղասպանութենէն առաջ Օսմանեան կայսրութեան մէջ, ուր թերեւս 4-5,000 հայ մտաւորականութիւն մը, «գրոց բրոց»ներու հայութեան թիւին հետ բաղդատած փոքր փաղանգ մը գիր ու գրականութիւն, արեւմտահայ մտածողութիւն եւ մշակոյթ ստեղծած, ապրած ու տարածած է:

Նման մշակոյթ ստեղծող ու զարգացնող «ընտրանի» մը առընթեր՝ առաւել կարեւոր է ու պէտք է անտեսել կամ նուազ ուշադրութիւն դարձնել հայախօսներու մեծ զանգուածին իրականութեան ու պահանջներուն:

Քննական մօտեցումով եթէ նայինք մեր ներկայ իրականութեան, դժուար է տեսնել որ այսօր երբ հայ լեզուի մասին կը խօսուի, կարծէք առարկայի մասին կը խօսինք, կամ լեզուն առարկայի մը վերածուած է մեր «ազգային» ատենախօսութեան մէջ. կարծէք լեզուն ստեղծագործողներէն, լեզուն խօսողներէն ու օգտագործողներէն անկախ՝ ինքնագոյ էակ մըն է, միջնորդութեան ու գործակալութեան յատկութիւններ տրուած են անոր (agency): Մեր «սքանչելին» է, կ'ըսենք՝ մեր «սրբութիւն սրբոցը», մեր «36 զինուորները» կանգնած «հայապահպանումի» պատերազմին առաջին շարքը, ինչպէս ոմանք կը նկարագրեն:

Չնայած որ լեզուն ունի իր հիմնական կանոնները, կառուցը ու զարգացման հոլովոյթը, հա-

տարակութիւնը ընդհանրապէս մասնագիտական հրահանգներու կամ չափանիշներու հիման վրայ է որ հայերէնը կ'օգտագործէ, այլ գործնական, ամէնօրեայ կեանքի շփումներու պարունակին մէջ: Լեզուն պէտք է միայն որպէս իտէլացուած հայ ինքնութեան «փրկիչ» տեսնել, այլ իմաստ ու զգացումներ արտայայտող հիմնական հաղորդակցութեան միջոց: Փողոցը խօսուած հայերէնը նոյնքան կարեւոր է որքան գրականն ու դասականը:

Հայերէն լեզու, այբուբեն, գիր, գրականութիւն ու գիրք իրարու հոմանիշներ դարձած են: Այսօր լեզուն, գիրն ու գիրքը դրուած են այնպիսի բարձր պատուանդանի մը վրայ, այնպիսի մաքրամաքուր օգտագործման չափանիշերու վրայ, որ Սփիւռք ապրող հայ մարդոց մեծամասնութեան համար անհասանելի են եւ հետեւաբար հետզհետէ անմատչելի ու նուազ հետաքրքրական: Շատերու համար այս «սրբութիւն սրբոցը» հայ ինքնութեան կարեւորագոյն, եթէ ոչ միակ, գրաւականն է:

Բայց՝ Յակոբ Օշականի բառերով, «Գրականութիւնը գիտութիւն մը չէ... Չայն չենք սորվիր, կ'ապրինք»:

Եւ ահաւասիկ մեր հիմնական հարցերէն մէկը՝ ինչպէ՞ս լեզուն ապրիլ եւ ոչ թէ միայն սորվիլ ու սորվեցնել: Այսօր ընդհանուր առմամբ մեր ոյժերը անհամեմատաբար կեդրոնացուած են

Շարք էջ 19

FALAFEL ARAX
EST. 1980

GLENDALE
(818) 696-2303
625 E. Colorado Street, Glendale, CA 91205
Monday - Saturday 10 am - 10 pm
Sunday 11 am - 8 pm
www.FalafelAraxUSA.com

New Locations Coming Soon

We Now Deliver!
All of our famous dishes delivered to your home or workplace for lunch and dinner!

feh 24
www.Feh24.com
(818) 565-9231

ՅՈՎՅԱՆՆԷՍ ՀԻՆԴԵԱՆԻՆ ՆՈՒԻՐՈՒԹ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՕՐԵԱՅ ԳԻՏԱԺՈՂՈՎ



Մայիս 26-27-ին, մեկնարկեց Խ. Աբովեանի անունի Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանի նախաձեռնած միջազգային երկօրեայ զիտաժողովը՝ նուիրուած խոշորագոյն մանկավարժ Յովհաննէս Հինդեանի ծննդեան 150 ամեակին: Այն կազմակերպել էին Համալսարանի «Սփիւռք Գիտաուսումնական Կենտրոնը» Հայ նոր եւ նորագոյն գրականութեան, Մասնագիտական կրթութեան եւ կիրառական մանկավարժութեան ամբիոնները:

Գիտաժողովը հովանաւորել են Համալսարանը եւ Նիւ Եորքի Պոլլաս՝այ Օգնութեան Միութիւնը (CARS, ատենապետ՝ Պերճ Արագ):

Սփիւռքից ներկայ էին բազմաթիւ հիւրեր, ուսուցիչներ, կրթական գործի կազմակերպիչներ: Արտասահմանեան մասնակիցներին, նախ, ջերմօրէն ընդունեց Համալսարանի Նախագահ Ռուբէն Միրզախանեանը, որը քաջածանօթ է Սփիւռքի կրթական հիմնախնդիրներին: Նա պատմեց Մանկավարժական Համալսարանի կրթական ուղղութիւնները, ժամանակակից նորարար մօտեցումները մասին:

Ապա հիւրերը դիտեցին Համալսարանի թանգարանը եւ այնտեղ բացուած «Պոլիսը մօտ ու հեռու» խորագրով գրաֆիկական աշխատանքները ցուցադրութիւնը (հեղինակ՝ Լեւոն Լաճիկեան):

ՀՀ Սփիւռքի Նախարարի անուանից զիտաժողովին ողջոյնի խօսքով հանդէս եկաւ աշխատակազմի ղեկավար Ֆիրդուսի Զաքարեանը: Նա մաղթեց արդիւնաւոր աշխատանք եւ ընդգծեց մանկավարժական հաւաքի համահայկական իւրաքանչեւութիւնը, որը քիչ է պատահուած մեզանում: Եւ իրաւունք ունէր. միայն Սփիւռքից մասնակցում էին Կարապետ Դաքէսեանը (Ֆրանսիա), Սիլվա Գուլումեանը եւ Արտաշէս Մարկոսեանը (Թուրքիա), Ռոսիթա Եուսէֆեանը (Արգենտինա), Արմէն Քիւրճեանը (Կանադա), Հրայր Ճէպէճեանը (Կիպրոս), Գաբրիէլ Սուլթանեանը (Անգլիա), Արիստի Բոնասեանը, Թորոս Թորոսեանը (Սուրիա) եւ ուրիշներ:

Բացման իր հանգամանակից խօսքում Համալսարանի ուսումնագիտական հարցերի գծով պրօֆեսոր Սրբուհի Գէորգեանը ծան-

րացաւ Հինդեանի մանկավարժական հակայական վաստակին ու մատնացոյց արեց այն ուղղութիւնները, որոնք որդեգրել է նաեւ Մանկավարժական Համալսարանը:

Իրենց զեկուցումներում, երջութիւններում ու քննարկումներով ժամանակ մասնակիցները բացառապէս Յովհաննէս Հինդեանի մեծութիւնը ոչ միայն իր ժամանակի մէջ, այլեւ ժամանակից դուրս, հաստատեցին նրա տիրական ներկայութիւնը, նրա մանկավարժական հայեացքների կենսունակութիւնը հենց մեր օրերում, ինչը թերեւս այս զիտաժողովի գլխաւոր աւանդանշատութիւնն էր:

Զեկուցումների մի զգալի մասը նուիրուած էր ժամանակակից կրթական մեթոդաբանութեան ընկալման ակունքներին եւ նորովի ճանաչողութեանը (Կարապետ Դաքէսեան, Արիստի Բոնասեան, Զուլփէտա Գիւլամիրեան, բոլորն էլ՝ Հայաստանից):

Հինդեան արուեստագէտ-մանկավարժի եւ գիտնականի էությունը աւանձնացրին Սուրէն Դանիէլեանը եւ Աշոտ Գալստեանը, իսկ մանկավարժի տիպարի համակողմանի վերլուծութեամբ հանդէս եկաւ Ստամբուլի Կեդրոնական վարժարանի տնօրէն Սիլվա Գուլումեանը, որի խօսքում մասնաւորաբար տողանցեցին ինչպէս Հինդեանի հիմնադրած «Նոր Դպրոցի» այնպէս էլ ցայտարար Կեդրոնական վարժարանի գիտամեթոդական հարուստ աւանդութիւնը, որի իրականացման մէջ մեծ է հենց իր՝ տնօրէնի երեսուն տարիների հակայական աւանդն ու դերակատարութիւնը:

Աւանձնակի համ ու հոտ հաղորդեց զիտաժողովին Թորոնթոյից ժամանած հինդեանցի Արմէն Քիւրճեանը, որի յուշերի կծիկը վերականգնեց Հինդեանի օրերի մթնոլորտն ու շունչը:

Հինդեանի կրթական գործունէութեան մոդէլի, համայնագէտ-մանկավարժի, նրա հայեացքների իւրաքանչեւութիւնների մասին ծանրացան զեկուցաբերներ Գալիանէ Խալաթեանը, Լաուրա Ասատրեանը, Նաիրա Տողանեանը:

Քրիստոնէական Աստուածաբանութեան ժամանակակից խորքային համեմատականներով աչքի ընկաւ Հրայր Ճէպէճեանը, որը նոր

լուարձակ բացեց Հինդեանի մանկավարժութեան եւ քրիստոնէական արժէքների հին ու նոր գնահատութիւններում:

Արեւմտահայ մեծ մանկավարժի հայաստանեան ներկայութիւնը դարձաւ Տաւուշի մարզի Կայան աւանում հիմնուած Հինդեանի գիտամեթոդական կենտրոն-վարժարանը, ինչի մասին հանգամանակից պատմեց Հայաստանում «Հինդեանի դպրոց» ծրագրի համակարգող Լեւոն Լաճիկեանը:

Մայիսի 27-ին, վաղ առաւօտեան, զիտաժողովի մասնակիցները մեկնեցին Կայան աւանի՝ Յովհաննէս Հինդեանի անունը կրող դպրոց: Իջեւանում նրանց դիմաւորեց եւ օրհնութեան խօսք ասաց թեմի Առաջնորդ Բագարատ Եպս. Գալստեանեանը: Ապա դպրոցի մուտքի մօտ աւանդական աղուհացով, երգ ու պարով ողջունեցին աշակերտներն ու ուսուցչական կազմը՝ տնօրէն Լենա Վարդանեանի ղեկավարութեամբ: Զինուորական համագործակցութեամբ աղջիկների պարը միանգամից զգաստացրեց. այստեղից սկսուած է հայրենիքը, այստեղ բոլորն են սահմանապահ, այս երեխաներն ամէն օր լսում են կրակի ձայնը ու յաղթահարում իրենց

լաւորման անհրաժեշտութեան պահանջի շուրջ:

Արմինէ Դալլաքեանը յարմար գտաւ ուշադրութիւն դարձնել «Նոր Դպրոցի» ժամանակակից մեկնաբանութիւններին, իսկ Արմէն Յարութիւնեանը աշակերտների գեղագիտական դաստիարակութեան մէջ փորձեց տեսնել Հինդեանի առաքելութիւնը՝ կենցաղից, մաքրակրթութիւնից մինչեւ գեղագիտական ընկալում: Զարուհի Ասատրեանի եւ Ելենա Գրիգորեանի համահեղինակութեամբ զեկուցող շոշափում էր դպրոցի եւ ընտանիքի համակցուած գործակցութեան անհրաժեշտութիւնը, որը Հինդեանի համար կրթական կենսական նշանակութիւն ունէր: Նոյն բարոյագիտական դաստիարակութեան ծիրում էր քննուած Հինդեանի մանկավարժական իւրաքանչեւութիւնները Սուսան Սիսեանը:

Քննարկումներից յետոյ իր եզրափակիչ խօսքում Սուրէն Դանիէլեանը բարձր գնահատեց այս միջազգային զիտաժողովը, նշեց զեկուցումների զիտամեթոդական ընդունելի մակարդակը եւ խորին շնորհակալութիւն յայտնեց ոչ միայն հիւրերին, այլեւ Նիւ Եորքի Պոլլաս՝այ Օգնութեան Միութեանը



ապրած մարդկային տագնապը:

Արդէն դպրոցի բազմամարդ դահլիճում, ուր տիրում էր հինդեանական շունչն ու բարձր ոգին, ուր հնչում էին Բեթհովէնի Իննեբորգ համանուագի անհայտնող հնչիւնները, իսկ պատերից ցուլանում էին «Նոր Դպրոցի» եւ պոլսական վարժարանների հաջորդ պատկերները, ամէն մի անկիւնից վեր էին յանուում ուսուցչապետի համակող ժպիտը, ականաւոր մանկավարժի խորիմաստ, ներսնում մտքերն ու ասոյթները, տնօրէնի ողջոյնի խօսքից եւ զիտաժողովի կազմակերպիչ Սուրէն Դանիէլեանի՝ մասնակիցներին ներկայացնելուց յետոյ սկիզբ առաւ երրորդ եւ վերջին նիստը, որ վարում էր Կիպրոսից Հրայր Ճէպէճեանը: Նա, նախ, իր յուզմունքն ու հիացումը արտայայտեց այս դպրոցում զիտաժողով անցկացնելու գաղափարի առթիւ, գնահատեց նախորդ օրուայ ելոյթները, ապա հրաւիրեց զեկուցաբերներին, որոնք թուով վեցն էին:

Գալիանէ Աղուզումցեանի խօսքի մէջ շեշտադրուած էին Հինդեանի մանկավարժական նպատակներից երջանկութեան սկզբունքները, որոնք տարաւ ու հասցրեց եւրոպական մտածողութեան ձեւաւորման շրջան: Քնարիկ Աբրահամեանը իր զեկուցող կառուցեց Հինդեանի ուսուցչապետի ու մարդու՝ գրամշակութային գնահատութիւնների համակարգի նոր ձե-

(CARS), նրա ատենապետ Պերճ Արագին եւ Խ. Աբովեանի անունի ՀՊՄ Հ Նախագահ, Թէքէեան Մշակութային Միութեան հայաստանեան գրասենեակի ատենապետ Ռուբէն Միրզախանեանին:

Թերեւս մեզանում վահան թէքէեանի առթիւ կազմակերպուած կրթամշակութային աւանդուած դարձած հանդիսութիւններին, ինչպէս վերջում դիպուկ նշեց Թէքէեան Մշակութային Միութեան ԱՄՆ-ի եւ Կանադայի հայաստանեան ներկայացուցիչ Գալիանէ Սուրբաբեանը, ով նաեւ Մանկավարժական Համալսարանի պատասխանատու պաշտօնեաներից է, աւելացաւ եւս մէկ աւանդութիւն՝ հինդեանականը, եւ այս առումով առաւել խորհրդանշական էր Թէքէեանի «Բարձրացում» քերթուածը, որի ընթերցումը Համալսարանի ուսանող Սեդա Ասլանեանի կողմից, արդէն առաջին օրը ցոյց տուեց երկու արուեստագէտ մանկավարժների հոգեկից մտերմութիւնը:

Նշենք, որ զիտաժողովի երկու օրերին իրեւ կամաւորներ իրենց մասնակցութիւնը բերեցին Համալսարանի ուսանողներ Նունէ Առաքելեանը, Տաթև Խաչատրեանը, Արեւատ Լազարեանը, Աննա Պօղոսեանը՝ հայցորդ Նելլի Թադէոսեանի գլխաւորութեամբ: Նրանք թերեւս այս օրերին Հինդեանին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ ԿԱՍ ՉԲԱՑԱՅԱՅՏՈՒԱԾ ՆԵՐՈՒԺԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ



Մայիսի 30-ին, ONEArmenia-ն, որը Հայաստանում կայուն սնունդ ստեղծելու կառուցվածքը գրառող շահագործող հիմնադրամ կազմակերպություն է, նոր դրամահալարաշար սկսեց իրականացնել տեխնոլոգիական կենտրոնների զարգացումը ամբողջ Հայաստանով: Նախագծի անունն է Hye Tech Kids, ու դրա նպատակները բնաւ համեմատ չեն:

Վերջին վեց տարիների ընթացքում հայաստանեան ՏՏ արդիւնաբերութիւնը աճել է տարեկան միջինում 22 տոկոսով: ՏՏ ոլորտում այժմ աշխատում է աւելի քան 15.000 մարդ, ինչը երկրի ՀՆԱ-ի 5 տոկոսն է կազմում: Սա հեշտ փոքր բաժին է Հայաստանի նման սահմանափակ ռեսուրսներով, բայց մաթեմատիկայից ու ժողովրդիկ ունեցող երկրի համար:

Այս փաստերը, ինչպէս նաեւ մի քանի յաջողակ հայկական ընկերութիւնների պատմութիւններ, մեզ մտք տուեցին Հայաստանը «Կովկասի Սիլիկոնեան հովիտը» դարձնելու մասին:

3.000 թափուր աշխատատեղ ու ողբերգութիւն չբացայայտուած ներուժի մասին

Մինչդեռ երկիրը պայքարում է աշխատանքային արտագաղթի մեծ թուերի ու 18.5 տոկոս գործազրկութեան դէմ, ըստ աղբիւրների, այսօր ՏՏ ոլորտում կայ 3.000 թափուր աշխատատեղ:

«Հայաստանում այնքան չբացայայտուած ներուժ կայ», - ասում է ONEArmenia-ի հիմնադիր Պատրիկ Սարկիսեանը, - «ՏՏ ընկերութիւնները աշխատողներ են փնտրում, մինչդեռ տարեկան հարիւրաւոր երիտասարդներ լքում են երկիրը՝ դրսում աշխատանք գտնելու»:

Խնդիրը բաւականին պարզ է. Հայաստանի ՏՏ ոլորտը շատ աւելի արագ է զարգացել, քան համապատասխան աշխատողների մատակարարումը:

Բերենք ՏՏ դասասնեակները դպրոցներ, իսկ լաւագոյն երեխաներին՝ ՏՏ ոլորտ Hye Tech Kids-ը վերջին տեխնոլոգիաները կը բերի Հայաստանի գիւղական դպրոցներ, ինչի շնորհիւ իւրաքանչիւր երեխայ կը ստանայ իրեն հասանելիք հնարաւորութիւնը:

ONEArmenia-ն՝ ինֆորմացի-

ոն տեխնոլոգիաների ձեռնարկութիւնների միութեան (ԻՏՁՄ) հետ համատեղ, կը սարքաւորի հինգ դպրոց Armath դասասնեակով՝ Հայաստանում ստեղծուած տեխնոլոգիական կենտրոնով, որի մէջ մտնում է 3D տպիչ, CNC սարքեր, hand-made մինի համակարգիչներ, ռոբոտաշինութեան լրակազմ ու կողաւորման երկու կրթական ծրագիր:

ONEArmenia-ի կողմից հաւաքուած \$57,882-ը նաեւ կ'օգտագործուի նախապատրաստելու մարզիչներ ու իրենց գործուղելու գիւղեր՝ արտադրողական խմբակներ յաճախող աշակերտներին կրթելու, ուղեկցելու ու ոգեւորելու նպատակով: «Յաճախելը պարտադիր չէ, - բացատրում է ԻՏՁՄ-ի նախագծերի համակարգող Աննա Սարգսեանը, - «Բայց դասերին մէկ անգամ եկող աշակերտների ճնշող մեծամասնութիւնը շարունակում է յաճախումները»:

Ծրագրի նախատիպը ԻՏՁՄ-ի կողմից իրականացուել է 2008-ին, ու ապացուցել է իր յաջողութիւնը. 500 շրջանաւարտների 70%-ը այժմ աշխատում կամ շարունակում են իրենց ուսումը ՏՏ ոլորտում:

Ուսումնական ծրագրի համաձայն՝ աշակերտներն այն աւարտելիս լիովին աշխատունակ կը լինեն: «3-ից 4 տարի ծրագրին մասնակցած պատանիները բաւարար տեխնիկական գիտելիքներ են ձեռք բերում ՏՏ ոլորտում կրտսեր մասնագէտի աշխատանք գտնելու համար», - բացատրում է Աննա Սարգսեանը, - «Իսկ նրանք, ովքեր որոշում են տեխնոլոգիաների ոլորտում համալսարանական կրթութիւն ստանալ, ամուր սկզբնակէտ են ունենում»:

Ներուժից մինչեւ աճ
Երեխաներին ու պատանիներին ՏՏ ոլորտում իրենց անհրաժեշտ ռեսուրսները տրամադրելով՝ ONEArmenia-ն - ԻՏՁՄ-ն ներդրում են Հայաստանի ամենամեծ՝ մտաւոր ուժի մէջ: Վերջին տեխնոլոգիական գործիքները գիւղական դպրոցներ, իսկ լաւագոյն երեխաներին ՏՏ ոլորտ հասցնելու գործում նրանց օգնելու համար տեսէ՛ք դրամահալարաշարն ու նուիրաբերէ՛ք հիմա:

ՍԱՀՄԱՆՈՒՄ ԿԱՆԳՆԱԾ ԶԳՈՒՄ ԷԻՆՔ, ՈՐ ԱԶԳՈՎԻ ԵՆՔ ՊԱՀՈՒՄ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ



ԹԱՄԱՐԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Ապրիլի երկուսից արդէն երկու ամիս է անցել, սակայն Քարվաճառի քաղաքապետ Ռուլանդ Այդիինեանն այդ եւ դրան յաջորդած օրերը շատ լաւ է յիշում: Նա մէկն էր այն բազմաթիւ կամաւորներից, որ Ապրիլի երկուսին մեկնեցին սահման՝ կանգնելու հայ գինուորի կողքին: Ռուլանդ Այդիինեանը Շահումեանի շրջանից առաջնագիծ մեկնած մի շարք կամաւորների հետ այնտեղ մնաց մինչեւ լարուածութեան համեմատական թուլացումը:

«Ապրիլի 2-ին Քարվաճառից գնացինք դէպի Թալիշ: Գիշերը համազգեստ ու գէնք ստացանք: Առաջին օրուանից անմիջապէս յայտնուեցինք մարտական գործողութիւնների կիզակէտում. արկերի պայթիւնների տակ էինք: Երբ յաջորդ օրը, Ապրիլի 3-ին, Թալիշից դուրս եկանք, որ մեկնենք առաջնագիծ, մեր խումբը նկատուել էր թշնամու կողմից: Այդ ժամանակ մեր դիրքերում սպառազինութիւնն ամբողջապէս օգտագործուել ու սպառուել էր: Մենք մեզ հետ նաեւ սպառազինութիւն, յատկապէս, հակատանկային խոցման միջոցներ էինք տանում», յիշում է Քարվաճառի քաղաքապետն ու ընդգծում՝ թշնամին այդ օրերին այդ ուղղութեամբ որոշակի յաջողութիւնների էր հասել, առաջ եկել:

«Երբ Թալիշից թեքուեցինք, դաշտում արդէն նկատուել էինք: Թշնամին տարբեր տրամաչափի գէնքերից մօտ 500 արկ է կրակել մեզ վրայ: Փառք Աստուծոյ, առանց կորուստների տեղ հասանք, գինամթերքն էլ հասցրինք: Երբ մենք հասանք, թշնամին արդէն զգացել էր, որ մերոնց մօտ հակատանկային միջոցներն սպառուել են, ու այդ հատուածում իրեն շատ լիտի էր պահում: Երբ հասանք, մեր տարած գինամթերքն օգտագործուեց, եւ տանկերը խուճապի մատնուելով՝ փախան: Իրենց հետեւակը մնաց առանց տանկերի օգնութեան ու զգալի կորուստներ կրեց», յիշում է Ռուլանդ Այդիինեանը:

Շահումեանի շրջանից մեկնած կամաւորական խումբը Ապրիլի 3-ից հերթապահել է առաջնագծում: Խօսելով խմբի կատարած կարեւոր մարտական առաջադրանքներից՝ մեր գրուցակիցն ընդգծեց. «Մենք թշնամուն կանգնեցրել ենք այնտեղ, որտեղ հասել են իրեն:

Մենք անմիջապէս համայրեցինք դիրքերն ու գործում էինք տեղի գումարտակի հրամանատարութեամբ: Տուեալ հրամանատարը ռազմարուեստին շատ լաւ էր տիրապետում. իր հրամանները կատարելով՝ կարողացանք թշնամուն կանգնեցնել: Մեր կամաւորական խումբը մի քանի անգամ նաեւ կանխել է դիւերսիոն ներթափանցման փորձ, թշնամու գինուորներին շարտել ենք իրենց ելման դիրքեր»:

Խօսելով կամաւորների ու ժամկէտայինների փոխարաբերութիւնների մասին՝ մեր գրուցակիցը նշեց, որ համազորակցութիւնն իսկապէս ստացուեց: «Յարաբերութիւնները ժամկէտայինների հետ շատ լաւ էին: Մենք մտածում էինք, որ այդ ամբողջ կատարուածը, ուժակոծութիւնները ժամկէտային գինաւաւորներին ընկճած կը լինէին, բայց մենք սխալուում էինք. իրենք էին մեզ քաջալերում: Երկրորդ օրուանից ռումբերի պայթիւնն այնքան սովորական դարձաւ, որ պայթիւնի ձայնից հասկանում էինք, թէ որքան մօտիկ են կրակում, ուր կ'ընկնի, պէտք է թաքնուել, թէ ոչ: Իսկ ժամկէտային գինաւաւորները մեզանից մէկ օր աւել էին եղել այս ամէնի մէջ ու աւելի վարժ էին»:

Դիրքերում մէկ ամսից երկար եղած կամաւորը համոզուած է՝ մեր յաջողութիւնները մեր միասնականութեան արդիւնք են: «Երեւի թէ երբեք մեր գինուորներն այդքան ոգեւորուած չեն եղել: Այսօր սահմանում կանգնած գինուորը շատ ամուր է եւ միանշանակ հասկանում է, թէ ինքը յանուն ինչի է կանգնած դիրքում: Միայն կարող եմ ասել՝ փառք ու պատիւ հայ գինուորին», նշեց Ռուլանդ Այդիինեանն ու յաւելեց՝ թիկունքի ուժը եւս զգացում էր սահմանում ու ոգեւորում տղաներին: «Մեր գնալու յաջորդ օրը մեզ մօտ հասան Գառնիի կամաւորները: Ու սկսուեց հոսքը ամէն տեղից, Հայաստանի բոլոր ծայրերից: Մտնող, ծխախոտ, հագուստ, անհրաժեշտ ամէն ինչ ստանում էինք, ու զգում, որ ամբողջ հայրենիքը, ամբողջ ազգը իրօք կանգնած է մեր թիկունքին: Յատկապէս յուզիչ ու կարեւոր էին երեխաների գրած նամակները: Բոլորս պահում ենք այդ նամակները. ինձ մօտ էլ մի քանիստ կան: Սահմանում կանգնած՝ մենք զգում էինք, որ ազգովի ենք պահում հայրենիքը», ամփոփեց մեր գրուցակիցը:

Ձեր Ծանուցումները Վստահեցէ՛ք «Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

ԱՆԿԱՆՈՆ ՈՒՏԵԼՈՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆԸ ՎՆԱՍԱԿԱՐ Է ՈՒՂԵՂԻՆ ՅԱՄԱՐ

Լուս Անճելուսի մէջ գտնուող Քալիֆորնիոյ համալսարանի հետազոտական խումբը յայտնաբերած է թէ գիրչերու մէջ ժամերուն ուտելու սովորութիւնը հակառակորէն պահանջարկ կը ստեղծէ, ոչ միայն ֆիզիքական առողջութեան, այլ նաեւ՝ մտային առողջութեան համար: Այս ծիրին մէջ գիտնականներ յայտնաբերած են նաեւ, թէ 15 միլիոն ամերիկացիներ աշխատանքային ժամերու պատճառով ունին անկանոն ուտելու սովորութիւն:

Ներկայ կեանքի պայմանները կը պահանջեն երկար աշխատանքային ժամեր, որուն ընթացքին մարդիկ յաճախ կը դիմեն արագ սնունդի, որ հասանելի է բոլորին՝ օրուան բոլոր ժամերու ընթացքին: Այս սովորութիւնը կը խախտէ մարմնի ներքին «ժամացոյցը», որ կը կանոնաւորէ քնանալու, աշխուժութեան, ուտելու եւ մարմնին մէջ հորմոններու արտադրութեան

ընթացքը: Մարմնի ներքին «ժամացոյց» ի խախտումը կրնայ ընթացք տալ երկրորդ տեսակի շաքարախտի զարգացման եւ տկարացնել մարմնի դիմադրողական համակարգը: Սակայն Քալիֆորնիոյ համալսարանի գիտնականները յայտնաբերած են թէ ան նաեւ կրնայ թերացնել սորվելու եւ լիչողութեան կարողութիւնները:

Գիրչերուն ու ժամերուն ուտելու սովորութիւնը կը խախտէ քնանալու ծիրը, ինչպէս նաեւ քնացած ժամանակ կ'աշխուժացնէ մարտողութեան համակարգը եւ պատճառ կը դառնայ սրտի արագ տրոփումներուն: Նախապէս կատարուած հետազոտութիւններ պարզած են թէ անկանոն ուտելու եւ քնանալու սովորութիւնները նաեւ կը բարձրացնեն քաղցկեղի, ընկճուածութեան, յոգնածութեան եւ սրտանօթային հարցերու հաւանականութիւնները:

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ՝ ՅԱՄԵՂ ՈՒՏԵԼԻՔԻ ԲԱՂԱԴՐՈՒՄ

Միացեալ Թագաւորութեան մէջ գտնուող Օքսֆորտի համալսարանի հետազոտները իրենց հետեւողական ուսումնասիրութիւններուն շնորհիւ կը ջանան յայտնաբերել կապը՝ երաժշտութեան եւ ուտելիքի համի ըմբռնումին միջեւ: Հետաքրքրական է, որ երաժշտութեան տարբեր յատկանիշերը կրնան տարբեր ազդեցութիւն ունենալ համի ըմբռնումին վրայ: Ուսումնասիրութեան արդիւնքներուն համաձայն՝ բարձր ձայնաստիճան ունեցող երաժշտութիւնները, որոնց մէջ օրինակի համար կ'իշխէ սրինգը, կը շեշտեն ուտելիքի քաղցրութիւնը եւ թթուութիւնը: Իսկ ցած ձայնաստիճանի պատկանող երաժշտութիւնները կը շեշտեն լեղի համը:

Այս ուսումնասիրութեան գլխաւոր հեղինակն է հետազոտ՝ Չարլզ Սթենս, որ կը բացատրէ թէ իր այս ուսումնասիրութեամբ ան կը փորձէ ցոյց տալ թէ ըմբռնումի եւ յատկապէս համերու ըմբռնումի ժամանակ մէկէ աւելի զգայարաններ կը գործեն միեւնոյն ժամանակ: Հետեւաբար, ըմբռնումը պարզապէս մտային աշխատանք մը համ զգացում մը չէ, այլ՝ փորձառութիւն է: Սթենս իր ուսումնասիրութեան որպէս առարկայ ընտրած է համերու ըմբռնումը, որովհետեւ ան կ'ենթադրէ թէ յատկապէս համերու ըմբռնման ժամանակ է, որ զանազան զգայարաններ կ'օգտագործուին:

Ուտելիքի համի փորձառութեան մէջ ձայներու եւ երաժշտութեան կողքին մեծ դեր ունի նաեւ

ուտելիքին կազմուածքը: Երբեմն մարդիկ կը մերժեն ուտելիքը պարզապէս որովհետեւ անոր կազմուածքը հաճելի չի թուիր իրենց: Այս ուտելիքներու ամէնէն լաւ օրինակներէն է խակ արմաւը կամ խիտունջը: Իսկ այլ ուտելիքներու պարզապէս, անոնց կազմուածքն է, որ հաճելի կը դարձնէ համը: Օրինակ ճէլոն, չիփսը, զովագուցիչ խմիչքները մաս կը կազմեն այս ուտելիքներու կամ ըմպելիներու շարքին:

Յաւելեալ բացատրութիւններ տալով իր կատարած հետազոտութեան մասին, Սթենս դիտել կուտայ թէ ծովափին վրայ ձուկ ուտելը աւելի հաճելի է քան տան խոհանոցին մէջ ուտելը, որովհետեւ ձուկերու եւ ծովափին պտուղներու հետ կապուած ծովուն ձայները կը շեշտեն ուտելիքին համեղութիւնը: Իր կատարած ուսումնասիրութիւններու ընթացքին, Սթենս յաճախ խնդրած է մասնակիցներէն, որ ուտելիքի համեր կապեն տարբեր ձայնաստիճան ունեցող երաժշտութիւններու հետ:

Ուսումնասիրութեան արդիւնքներէն մէկնելով, Սթենս եւ իր հետազոտական խումբը կ'ըսեն թէ երաժշտութեան միջոցով կրնան 5-էն 10 համեմատութեամբ ազդել համի ըմբռնումին վրայ: Հետեւաբար, տօնական օրերուն կարելի է ի մտի ունենալ Սթենսի կատարած այս հետազոտութիւնը եւ ընթրիքի ժամանակ անպայման միացնել ձայնաստիճանը կամ հիւրերու նախապիրած երաժշտութիւնը:

ՆԱՅԻՐԻ ՇՈՐՃԵԱՆ

ԸՆԿՈՒՎԾՈՒԹԻՒՆԸ ԿՐՆԱՅ ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ԶՈՅԳԻՆ ՍԻՉԵՒ ՅԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Ըստ վերջին հետազոտութիւններուն, ամերիկացիներու 6.7 առ հարիւր համեմատութիւնը կը տառապի ընկճուածութենէ:

Ինչպէս յոռետեսութիւնը, մշտական ցաւերը, յոգնածութիւնը եւ շղայնութիւնը, ընկճուածութիւնը եւս կրնայ ազդել գոյգի մը միջեւ հաղորդակցութեան մակարդակին վրայ եւ դժուարացնել յարաբերութիւնը պահպանելու աշխատանքը: Communication Monographs ամսագրին մէջ հրատարակ-

ուած յօդուածի մը համաձայն՝ ընկճուածութիւնը, ինչպէս նաեւ յարաբերութեան անորոշութիւնը կրնան արգելք դառնալ կողակիցներու միջեւ առողջ հաղորդակցութեան:

Ընկճուածութենէ տառապող անհատներու մօտ սովորական երեւոյթ է հեռու մնալ ժխտական կացութիւններէ եւ որեւէ փոփոխութիւններէ՝ ընկերային գետնի

ՀՈԳԵԿԱՆ ՑՆՑՈՒՄՆԵՐՈՒ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ՍԵՐՈՒՆԴՆԵՐՈՒ ՍԻՉԵՒ

Կեանքի ընթացքին հոգեկան ցնցումները անխուսափելի են: Բոլոր մեր մանկութեան կամ պատանեկութեան ընթացքին, ինչպէս նաեւ չափահաս տարիքին ենթարկուած ենք հոգեկան ցնցումներու, սակայն անոնց սաստկութիւնն է, որ կը տարբերի: Ոմանք կ'ենթարկուին սաստիկ ցնցումներու, իսկ ուրիշներ միջին կամ շատ մեղմ հոգեկան կամ զգացական ցնցումներու:

Մասնագէտներու համաձայն՝ հոգեկան ցնցումները կամ trauma-ները ունին քանդիչ եւ կառուցողական յատկանիշեր: Սաստիկ հոգեկան ցնցումները կրնան պատճառ դառնալ հոգեկան հարցերու, ինչպէս՝ ընկճուածութեան, իսկ մեղմ կամ միջին ցնցումները կրնան զօրացնել անհատին դիմադրողականութիւնը:

Այս գծով նախապէս կատարուած հոգեբանական եւ ծինային հետազոտութիւններ պարզած են թէ հոգեկան ցնցումներու վատ յատկութիւնները կրնան փոխանցուիլ սերունդէ սերունդ: Այլ իօսքով, հոգեկան ցնցումներու ենթարկուած անհատներու զաւակները մեծ հաւանականութիւն կրնան ունենալ տառապելու զգացական հարցերէ, անձկութենէ, ճնշուածութենէ եւ ընկճուածութենէ:

Հոգեկան ցնցումի սերունդներու միջեւ փոխանցման գծով կատարուած նոր փորձարկումներ

ՈՒՐԱՆ ԶՈՅԳԵՐՈՒ 10 ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1.Նոյն ժամանակ քնանալ: Բոլոր գոյգերը իրենց յարաբերութեան սկիզբի հանդերձաններուն կը փափաքին նոյն ժամանակ քնանալ, նոյնիսկ երբ անոնց աշխատանքային ժամերը տարբեր ըլլան: Ըստ հոգեբաններուն, այս սովորութիւնը պէտք է պահպանուի մինչեւ վերջ, որովհետեւ ան կը ստեղծէ թէ՛ ֆիզիքական եւ թէ՛ հոգեբանական մտերմութիւն:

2.Նոյնանման հետաքրքրութիւններ մշակել: Իւրաքանչիւր անձ տարբեր է միւսէն եւ այս տարբերութիւնն է, որ կը ստեղծէ անհատի մը «ես»ը: Սակայն չափազանց տարբերութիւնները կրնան ժխտական ազդեցութիւն ունենալ յարաբերութեան վրայ: Յարատեւ ջանքերով եւ փոխ գիշումներով կարելի է ստեղծել նոյնանման հետաքրքրութիւններ, որպէսզի իւրաքանչիւր անձ չկորսուի իր անձնական աշխարհին մէջ՝ մոռնալով իր կողակիցը:

3.Ձեռքերը բռնած կամ կողք կողքի քայլել: Թէեւ նման երեւոյթ մը աւելի սովորական է նորակազմ գոյգերու մօտ, ձեռք բռնելու կամ կողք կողքի քայլելու սովորութիւնը չի վնասեր մնացեալ գոյգերուն: Ուրախ գոյգերը կ'անդրադառնան այս սովորութեան կարեւորութեան:

4.Վստահիլ եւ ներել: Անհամաձայնութիւնները անխուսափելի են յարաբերութեան մէջ, սակայն հարցերը լուծելու ամէնէն արդիւնաւէտ միջոցներէն է վստահութեամբ եւ ներելով զայն աւարտելը:

5.Կեդրոնանալ դրական կէտերուն վրայ: Զոյգերու մօտ երբեմն կը յառաջանայ կողակիցին սխալներուն անդրադառնալու եւ անոնց վրայ կեդրոնանալու սովորութիւնը: Ուրախ գոյգերը նաեւ կը կեդրոնանան իրենց կողակիցի դրական

պարզած են թէ վատ յատկանիշերու կողքին, ցնցումներու դրական հետեւանքները եւս կրնան ծիներու դրութեամբ փոխանցուիլ անհատի մը զաւակներուն: Այսինքն՝ եթէ անհատ մը ենթարկուելով հոգեկան ցնցումները չաջողած է անոնց դիմադրել եւ շրջանցել, այս յատկութիւնը կրնայ փոխանցել յաջորդող սերունդին:

Այս հետազոտութիւնը կատարուած է Զիւրիխի համալսարանի հետազոտական խումբին կողմէ: Նորագոյն ուսումնասիրութեան շնորհիւ գիտնականները յայտնաբերած են մոլեգիւլներ, որոնք կրնան փոխանցել հոգեկան ցնցումներու դրական յատկանիշերը: Գիտնականները այս փորձարկումը կատարած են մուկերու մասնակցութեամբ, որոնցմէ մաս մը ծնունդէն ետք բաժնուելով իր մօրմէն ենթարկուած է հոգեկան ցնցումի:

Հետաքրքրական է հետազոտութեան արդիւնքը, ըստ որուն՝ ճնշուածութեան եւ ցնցումներու ենթարկուած մուկերն ու իրենց զաւակները աւելի արդիւնաւէտ ձեւով կը լուծեն իրենց ներկայացուած խնդիրները: Գիտնականները կը շեշտեն թէ յատկապէս մանկութեան ցնցումները բնաւ դրական չեն եւ նախընտրելի է, որ անոնք չպատահին: Կեանքի ընթացքին միջին եւ մեղմ ցնցումները կրնան օգտակար ըլլալ:

արարքներուն եւ վարմունքին վրայ:

6.Ֆիզիքական մտերմութիւնը պահպանել: Գիտական հետազոտութիւնները պարզած են թէ ֆիզիքական հաղորդակցութիւնը կը բարձրացնէ հաճոյք պատճառող եւ ընկճուածութեան դէմ պայքարող հորմոններու քանակը:

7.Իւրաքանչիւր առաւօտ լաւ իօսքերով դիմաւորել զիրար: Անօրեայ կեանքի ճնշուածութիւնը եւ տաղտուկները, ինչպէս նաեւ աճապարանօք վիճակը կրնան պատճառ դառնալ, որ յատկապէս առաւօտեան ուշադրութիւն չհարձենք մեր կողակիցին: Սակայն, ուրախ գոյգերը չեն մոռնար դրական իօսքեր ուղղել իրենց կողակիցին՝ նախքան աշխատանքի մեկնելը:

8.Ամէն գիշեր նախքան քնանալը գիշեր բարի ըսել: Ըստ հոգեբաններու, «Գիշեր բարի» ըսելու սովորութիւնը կարեւոր բաղադրութիւն է ուրախութեան եւ մտերմութեան պահպանման: Որքան ժամանակ անցնի յարաբերութեան մէջ այնքան աւելի կարեւոր կը դառնայ նման մանրամասնութիւններու գոյութիւնը:

9.Օրուան ընթացքին ստուգել «կացութիւնը»: Կարեւոր է, շարունակական կապի մէջ մնալ կողակիցին հետ ստուգելու համար անոր հոգեկան վիճակը: Երկար ժամանակ կապի բացակայութիւնը կրնայ անակնկալներու առջեւ դնել մեզ հանդիպման ժամանակ:

10.Հպարտ ըլլալ կողակիցով: Որքան կարեւոր է յարաբերութեան յաջողութիւնը այնքան կարեւոր է կողակիցներու անհատական ուրախութիւնն ու հանգստութիւնը: Մեր կողակիցը պէտք է ըլլայ մեզ հպարտութեան աղբիւրներէն մէկը: Հպարտութիւնը կը վերանորոգէ սիրոյ, մտերմութեան եւ երջանկութեան զգացումները:

ԱՍՏՂԵՐԸ Ի՞ՆՉ Կ'ԸՍԵՆ

ԽՈՅ Մարտ 21-Ապրիլ 19
 Սխալ ընտրություն մը կարող ես ընել որու հետևանքով նեղամաս: Վիրավորական խօսքեր մի ըսեր կողակիցիդ, քանի ան քեզ շատ կը սիրէ: Լաւ յատկանիշներդ օգտագործէ ապագայի յաջողութիւններուդ համար:
 Բախտաւոր թիւերդ են: 5,11,25,26,34

ՑՈՒԼ Ապրիլ 20-Մայիս 20
 Սխալներդ ընդունելով՝ կը վախճաս թէ ծաղրանքի առարկայ պիտի ըլլաս գործակիցներուդ մօտ: Կեանքիդ նկատմամբ երախտագէտ եղիր եւ արժէք տուր բոլոր շուրջիներուդ: Շատ օգտաշատ գործ մը պիտի ամբողջացնես այս շաբաթ:
 Բախտաւոր թիւերդ են: 11,20,27,30,35

ԵՐԿՈՒՌԵԱԿ Մայիս 21-Յունիս 20
 Հեռաձայնի կանչ մը պիտի ուրախացնէ քեզ եւ աշխատանքի փափաքդ պիտի վերագտնես: Ընտանիքիդ անդամները քեզի նայելով օրինակիդ կը հետեւին, լաւ դաստիարակ եւ շիտակ ճամբուն մէջ առաջնորդէ զանոնք:
 Բախտաւոր թիւերդ են: 7,15,24,29,33

ԽԵՑՊԵՏԻՆ Յունիս 21-Յուլիս 22
 Հաշիւներդ զբաղ շաբաթ մը պիտի ըլլայ այս շաբաթ քեզի համար: Փորձէ շատ չյոգնեցնել դուն քեզ: Պատահական չէ որ սիրուած ես գործիդ մէջ, գիտակից եւ համբերող բնաւորութիւնդ է որ կ'արտացոլայ դէմքիդ վրայ:
 Բախտաւոր թիւերդ են: 4,16,22,31,34

ԱՌԻԺ Յուլիս 23-Օգոստոս 22
 Սխալ պատճառներու համար կը պայքարիս դուն քեզ հետ, ամփոփուիր եւ մտածէ թէ ինչ է կարելորագոյնը կեանքիդ մէջ: Քաջութիւնդ մի կորսնցնէր պարզապէս մարդոց ըսի ըսաւները լսելով: Սնունդիդ լաւ հոգ տար որ զօրանաս:
 Բախտաւոր թիւերդ են: 6,12,18,21,29

ԿՈՅՍ Օգոստոս 23-Սեպտեմբեր 22
 Գործի մեծ ծրագիր մը քեզ կ'անհանգստացնէ, մի վարանիր առանձին ստանձնելու գայն, որովհետեւ պիտի յաջողիս: Շատ զգացական փորձառութիւն մը պիտի ունենաս անձի մը հետ որ կեանքդ ամբողջութեամբ պիտի բարելաւէ:
 Բախտաւոր թիւերդ են: 10,11,23,32,33

ԿՇԻՌՔ Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22
 Անորոշութեան մէջ կը տառապիս եւ ոեւէ մէկու առաջնորդութեան չես հետեւիր: Վնասակար նախապաշարումներդ ձերբազատուելու համար՝ պէտք է զարգացնես դուն քեզ եւ հետեւիս ճշմարիտ իրականութիւններու:
 Բախտաւոր թիւերդ են: 7,19,25,26,30

ԿԱՐԻԸ Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21
 Պարտքերդ կը ճնշեն վրայդ եւ քեզ յուսահատութեան կ'առաջնորդեն: Փոխանակ յուսալքուելու՝ մտածէ թէ ինչ բանը քեզ հասցուց այս գէշ պայմաններու տակ եւ ճարը պիտի գտնես: Ընտանիքիդ անդամներուն նեցուկ կանգնէ եւ անոնց վեճերը եղիր:
 Բախտաւոր թիւերդ են: 1,7,17,23,33

ԱՂԵՂՆԱՒՈՐ Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21
 Խոստումներ տուած ես կարգ մը անձերու եւ մոռցած զանոնք կատարելու, հիմա ժամանակը եկած է յարգելու խոստումներդ: Ունեցած առաւելութիւններուդ երախտագէտ ըլլալու ես: Գործիդ բարելաւման համար քու բաժինդ պէտք է բերելու ես:
 Բախտաւոր թիւերդ են: 3,18,20,26,35

ԱՅԾԵՂՋԻՐ Դեկտեմբեր 22-Յունուար 19
 Ապահովութեամբ պիտի ներշնչուիս, բան մը որ երբեք չես զգացած առաջ եւ պիտի գիտնաս թէ կեանքը որքան հաճելի է: Միշտ պաշտպանէ իրականութիւնը եւ հակառակութիւններդ քաջութեամբ դիմագրաւէ: Վստահիր զօրութեանդ:
 Բախտաւոր թիւերդ են: 9,14,23,30,34

ԾՈՎԱՆՈՅ Յունուար 20-Փետրուար 18
 Պահանջներդ անհամար կը թուին ըլլալ, սակայն իրականութեան մէջ քիչով գոհացող եւ հեզ անձ մըն ես: Շրջանակիդ կողմէ շատ սիրուած ես եւ բարեկամներդ իսկապէս կը սիրեն քեզ ու քու կողքիդ են ամէն պարագաներուդ մէջ:
 Բախտաւոր թիւերդ են: 18,24,29,32,31

ՉՈՒԿ Փետրուար 19-Մարտ 20
 Հիմնական կարիքներդ պէտք է հոգաս, սակայն միեւնոյն ժամանակ՝ զգուշանաս դրամդ մսխելով: Գործընկերներուդ նկատմամբ կեցուցաքոյ փոխէ եւ քիչ մը աւելի հասկցիր անոնց մտահոգութիւնները: Արժէքաւոր նուէր մը պիտի ստանաս:
 Բախտաւոր թիւերդ են: 8,19,24,27,29

Գերմանիայի Հզօր Հարուածը Թուրքերին

Շարունակուած էջ 2-էն

կարող է ներհասարակական կոնսուլիդացիային ու անդորրին անդառնալի հարուած հասցնել Գերմանիայի հենց ներսում:

Ըստ պաշտօնական տուեալների, Գերմանիայում առկայ է 3, 7% թուրքական փոքրամասնութիւն: Առաջին հայեացքից սա փոքր թիւ է: Բայց նախ այդ թիւը խիստ փոքրացուած է՝ իրականում թուրքերը երեւի երկու անգամ շատ են: Եւ բացի այդ էլ, թուրքերը հաւասարաչափ չեն բաշխուած երկրով մէկ՝ նրանց համամասնական ներկայութիւնը խիստ բարձր է քաղաքներում, որոշներում հասնելով նոյնիսկ մի քանի տասնեակ տոկոսի:

Միւսն էլ թուրքիայի մշտական ու լիտի շանտաժն է՝ իբր փախստականների հոսքի լծակներն իր ձեռքում ունենալու փաստով:

Հետեւաբար, եթէ դիւանագիտական քայլերը չէին աշխատում, իսկ ժամանակն էլ ի վնաս գերմանացիների էր աշխատում, ապա պէտք էր շուտափոյթ գնալ որոշման, այլապէս յետագայում ուշ կը լինէր:

Եւ որոշում կայացուցեց, որ չնայած իր «բարեկամ» երկրների հակադիր կեցուածքին, հիմա է պահ թուրքերի հետ գլոբալ առճակատման, քանի դեռ նրանց դէմ պայքարի ռեսուրսներ կան:

Իսկ կոնֆրոնտացիոն միակ շարժար լծակն էլ թուրքերի համար խիստ զգալուն՝ հայկական Գենոցիդի հարցն էր: Պատկերաւոր ասած, գերմանացիք այս որոշմամբ ոչ թէ երկու, այլ բազմաթիւ «նապաստակներ» են միանգամից թիրախաւորել: Եւ անսպասելին այն է, որ շատ ճիշդ է հաշուարկուած հարուածի եւ ձեւը, ու ուղղութիւնը:

Թուացեալ, Գերմանիան իբր միայնակ է մտել թուրքերի հետ վճռական պայքարի մէջ, բայց իրականում իր մէջքին ունի եւ գերմանացիների, եւ եւրոպական երկրների ու հասարակութեան մեծամասնութեան աջակցութիւնը իր գոյութեան համար մղուող գլոբալ այս պայքարում:

Այո, իրականում գերմանացիները կանգնած են բազմակողմանի եւ գլոբալ խնդիրների առջեւ: Իրենց պայքարը միայն թուրքերի դէմ չէ, այլ եւրոպական արժէքների, եւրոպական պետական դրուածքների, քրիստոնէական արեւմուտքի համար է:

Արտաքնապէս որոշումն իբր հայերի օգտին արուած մարդասիրական քայլ է, բայց իրականում այն տեկտոնիկ ուժի միջազգային տարուների տեղաշարժ է, որը դեռ ծաւալուելու է, անկախ նոյնիսկ գերութեւրի կամքից:

Եւ պատահական չէ թուրքերի ցուզցուանգային հիատերիան՝ ներառեալ դեսպանի յետկանչը, եւ գերտէրութիւնների չափաւոր արձագանքը:

Այս որոշմամբ գերմանացիք փաստացի միացրեցին եւրոպամէտ, քրիստոնէամէտ, մարդամէտ, ազգերի իրաւունքներին միտուած եւ գլոբալ կեղծիքի ու կեղծ տարուների դէմ գործընթաց:

Թուրքերի համար ես չեմ տեսնում բաւարար պաշտպանական քայլեր: Նրանք կարող են շարունակել աղաղակելը, քրտերին գենոցիդելը, փախստականներ գեներացնելը, Սիրիայում իսլամիստներին գինեյն ու արիւն հեղելը, բայց նրանք դատապարտուած են, քանի որ հենց այս որոշմամբ շատ բան է փոխուելու եւ իրենց շուրջը եւ աշխարհում:

Եւրոպան է կոնսուլիդացուելու ընդդէմ փախստականների նոր հոսքի, մահմեդականները կորցնելու են մարդու իրաւունքների շանտաժով եւրոպայում արշաւելու հիմքերը: Մահմեդականներն ու թուրքերը չեն կարողանալու այլեւս դեմոգրաֆիական շանտաժով դիրքեր գրաւել:

Հրեաները չափաւորուելու են Գերմանիային շանտաժելու եւ Հորթոստը շահարկելու առումով, ՆԱՏՕ-ն եւ ամերիկացիների ռազմական էլիտան ստիպուած են լինելու համակերպուել գերմանացիների առաւել սուվերենութեան հետ ու գիշել եւրոպային՝ ինքուրոյն տիրապետելու իր հարցերը:

Բազմաթիւ այլ բաղադրիչներ ու հնարաւորութիւնների դաշտեր էլ կան այս որոշման հետ կապուած: Իրօք, կատարուածն ահռելի է եւրոպական քաղաքական խաղաղաշարժի համար, բայց բաւարարուենք վերը նշուածով:

Մեր, հայերիս առումով այս որոշման մէջ դրական կայ՝ անկախ նոյնիսկ մեր բոյսակերպ, անմակարդակ, տղէտ ու անսկզբունքային դիւանագիտականից:

Ակնյայտօրէն թուրքիան այլեւս չի յանդգնի յարձակուել Հայաստանի վրայ չինձու պատրուակով: Նախկինում այս հնարաւորութիւնը կար, այսօր չկայ:

Ատրպէյճանի հետ յարաբերութիւններում բացուած է իսոսակցութեան ու կարգաւորման նոր ասպարէզ՝ կապուած Ատրպէյճանի տարածքում Գենոցիդի ժամանակներից սկսած այնտեղ իրացուած այլ փոքր գենոցիդների հարցի հետ՝ ներառեալ դարաբաղեան պատերազմը:

Նոր հնարաւորութիւնները կան, սակայն ցաւօք, ինչպէս միշտ, մենք շարունակելու ենք մնալ ինքնակործանման տանող մեր իշխանական անհաղորդ բթութեան փաւուղիներում:

«ԼՐԱԳԻՐ»

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

ԺԱՆՕ ՊԱԼԵԱՆԻ մահուան տիտուր առթիւ Տէր եւ Տիկ. Վիգէն եւ Սալբի Մանկրեան իրենց խորագգաց ցաւակցութիւնը կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն:

ՊՕՂՈՍ ՄԽԻԹ-ԱՐԵԱՆԻ մահուան տիտուր առթիւ Տէր եւ Տիկ. Վիգէն եւ Սալբի Մանկրեան իրենց խորագգաց ցաւակցութիւնը կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն:

ԷՐՏՈՂԱՆ-ՏԱԻՌԹՕՂՈՒ ԶՈՒԳԵՐԳԻ ՎԵՐՋԸ

Շաբաթական 13-էն

Եւ իր կուսակցութիւնը բաւակա- նաչափ հզօր են:

Աշխարհահռչակ թուրք գրող Օրհան Փամուք իտալական «La Repubblica» թերթին արտայայտուած է՝ ըսելով, թէ «երկիրը վախի մթնոլորտի մէջ է. Եւրոպան պարտաւոր է իր խօսքը ըսելու»:

Այո՛, Թուրքիան վախի մթնոլորտի մէջ կ'ապրի, եւ այդ մէկը կը հաստատէ «Էրմենիսպեր» կայքի մէկ լուրը, ուր կը յիշուի, թէ Թուրքիոյ Հանրապետական ժողովրդային կուսակցութեան նախագահ Քեմալ Քըլըճտարօղլու ըսած է էրտողանի համակիրներուն՝ «Առանց արհաւիրումի հոսեցնելու չէք կրնար այս երկիրին մէջ նախագահական դրութիւն հաստատել. այդպիսի դրութիւն մը երկիրը կրնայ մենասիրութեան առաջնորդել»:

Իսկ ինչ կը վերաբերի մեզի՝ հայերու, ապա Պոլսոյ «ժամանակ» թերթի իմբազդիւր Արա Գոչունեանի խօսքով՝ «Թուրքիոյ մէջ ճգնաժամ չկայ. ընդամենը՝ որոշա-

կի անհատներ պիտի փոխուին: Տաւութօղլուի հրաժարականը չ'ազդեր այնտեղ ապրող հայկական համայնքին վրայ, ո՛չ դրական, ո՛չ ալ բացասական ձեւով»: Երանի թէ այդ խօսքերը իրականութիւն ըլլան եւ համայնքը չ'վնասուի. յամենայնդէպս, այդպիսի քաղաքական գեկոյցներ կ'ակնկալուին ներկայ ճգնաժամին մէջ:

«Դժուար է Թուրքիոյ մէջ հայ ըլլալը», կ'ըսէ թուրք հռչակաւոր գրող Էլիֆ Շաֆաք: Էրտողանի ծայրայեղական քաղաքականութիւնը ոչ թէ միայն Թուրքիա ապրող հայերուն, այլեւ բոլոր քաղաքացիներուն պիտի վնասէ:

Վերջապէս չի շնք, թէ Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան բանբեր Մարիա Զախարովա, Մայիս 4ին «Իզվեստիա» օրաթերթին հետ գրոյցին ընթացքին յայտնած է, թէ Թուրքիոյ իշխանութիւնները կ'երազեն Օսմանեան կայսրութիւնը վերականգնելու մասին, սակայն կը մոռնան այդ կայսրութեան ճակատագիրը:

ՍԱՐԴԱՅԻՆ ԽՂԵՒ ՈՒ ՆՈՒՐԲ ԱՐԺԵՆԵՐՈՒ ՅԱՅԵԼԻ ՄԸ

Շաբաթական 14-էն

սորվեցնելու գործընթացին վրայ: Անկասկած՝ սորվիլն ու սորվեցնելը անհրաժեշտ են, բայց չեն կրնար ինքնապատու ըլլալ:

Բնականաբար բոլոր ինդիւրները կարելի չէ միեւնոյն ժամանակ լուծել կամ նոյն առաջնահերթութեամբ: Սփիւռքեան մեր իրականութեան մէջ կը պակասին հաստատութեանական (institutional) լուծումներ: Անշուշտ եղած են ու կան անհատներ, իրապէս հերոս անհատներ՝ ինչպէս Պէպօ Սիմոնեանը, որոնք իրենց անձնական, մտաւորական, նիւթական կամ կազմակերպչական միջոցներով շատ մը ինդիւրներ լուծած են եւ տակաւին կը լուծեն, բայց երկարաժամեայ լուծումները լուրջ միջոցներ կը պահանջեն, միջոցներ որոնք՝ անհատէն անդին, հաստատութիւններն ու կառուցները

միայն կրնան կենսագործել: Պէտք է նոյնիսկ մտածել նոր հաստատութիւններ ստեղծելու մասին:

Եւ վերջապէս, հարց մը որուն համար Պէպօ Սիմոնեանն ալ կը տատապէր - մեր դեկավար տարրին, իրենց արամադրութեան տակմիջոցներ ունեցող ընտրանիին եւ մտաւորականութեան միջեւ երկխօսութեան հարցը: Պէտք է կամուրջ մը ստեղծել որպէսզի պէտք եղած հնարաւորութիւններն ու նիւթական միջոցները ստեղծուին 21-րդ դարուն արեւմտահայերէնի կենսունակութիւնը ապահովելու համար:

Ինչպէս Պէպօ Սիմոնեանը դիտարկած է, «Սփիւռքը յետեղեռնեան Սփիւռքը չէ: Նոր եւ յարափոփոխ հոլովոյթ ապրող եւ դիմազիծ փոխող Սփիւռքը նոր քաղաքականութեան կը կարօտի: Տարբեր բնագաւառներու հետ նաեւ լեզուականը՝ այսինքն արեւմտահայերէնը»:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԻՆԴԵՄՆԻՆ ՆՈՒՐՈՒԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՕՐԵԱՅ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Շաբաթական 15-էն

ճանաչելուց զատ ստացան մանկավարժական թերեւս ամենանշանակալի դասերից մէկը: Սա եւս մէկ հնարաւորութիւն էր, համալսարան-դպրոց կապի եւս մէկ արտաչափութիւն, որն անշուշտ հինգընեցի եւ շրջակայ գիւղերի շատ ու շատ դպրոցականներին վաղը առաջնորդելու է Մանկավարժական Համալսարան, ինչպէս նշեց Սուրէն Դանիէլեանը:

Վերջում սիրոյ սեղանի շուրջ աւելի անմիջական ու անկաշկանդ

գրոյց բացուեց Հինգընեցի ու նրա ժամանակի, մեր օրերի հետ աղերսուող կրթական հիմնահարցերի, այսօրուայ ազգային-քաղաքական ծանրագոյն շրջանի եւ մեր գրամշակութային կեանքի նշանակալից իրադարձութիւնների մասին: Սփիւռքի եւ հայրենի մտաւորականների խօսքը ընդմիջում էր ասմունքով, երգով, հայրենի բնաշխարհից ու մասնաւորապէս Հաղարծինի վանքից ստացած բարձր տպաւորութիւններով:

«Սփիւռք» Գիտաուսումնական Կեդրոնի լրատուութիւն

ԸՆԿՈՒԱԾՈՒԹԻՒՆԸ ԿՐԱՅ ԽՈՉԸՆԴՈՏԵԼ

Շաբաթական 17-էն

վրայ: Անոնք կը նախընտրեն հեռու մնալ որեւէ կացութենէ, որ կրնայ փոփոխութեան ենթարկել իրենց զգացումները: Ընկճուած անհատները այնքան դիւրաբեկ կ'ըլլան, որ նոյնիսկ կը վախնան պահպանել իրենց սիրային յարաբերութիւնները: Անոնք լաւ գիտեն թէ յարաբերութիւններուն մէջ կան վերելքներ եւ վայրէջքներ եւ անոնք յատկապէս կը ջանան հեռու մնալ այս վայրէջքներէն:

Յարաբերութիւն մը, որ քան ալ հաստատուած եւ կազմաւորուած ըլլայ, անպայման իր մէջ ունի անորոշութիւն՝ ապագայի վերաբերեալ: Այս անորոշութիւնն է, որ ամէնէն շատ հեռու կը պահէ ընկճուածութենէ տառապող ան-

ձերը իրենց կողակիցներէն: Անոնք կը խուսափին արծարծելէ որեւէ նիւթ, որ կրնայ կապ ունենալ իրենց յարաբերութեան անորոշութեան կամ ապագայի ծրագրիներուն հետ:

Միացեալ Նահանգներու մէջ կատարուած այս ուսումնասիրութեան մաս կազմած են 126 գոյգեր, որոնցմէ առնուազն կէսը պիտաւանաչուած էր ընկճուածութեամբ: Մասնակիցներուն կէսը ունէին գաւակներ, իսկ քանի մը հատը ամուսնացած էին:

Ուսումնասիրութեան արդիւնքները պարզեցին թէ բոլոր պարագաներին, յարաբերութեան անորոշութեան հետ կապուած հարցերը պատճառ կը դառնան, որ ընկճուած կողակիցը խուսափի հաղորդակցութենէ:

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՏԱԿՆԵՐ
 1060 North Allen Ave Pasadena, CA 91104
 Գրասենեակները վերանորոգուած
 եւ յարմար վարձքերով
 հեռաձայնել՝ (626) 398-0506

Ն.Ս.Ս.Ս ԱՐՈՒԵՍԻ 3ԱՆՁՆԱԽՈՒՄԸ
 Կը Կազմակերպէ
ԱՍՍՈՒՆՔԻ ԴԱՍԸՆԹԱՅՔՆԵՐ
 Տարիքային Բոլոր Խումբերու Վաճառ
 Դեկավարութեամբ՝
 Արուեստի Վաստակաւոր Դափնեկիր, Ասմունքող
 Եւ Վեռուստալրագրող
ՆՈՒՆԵ ԱԲԵՏԻՍԵԱՆԻ
 Փորձերը տեղի կ'ունենան ՎԿԲՄ-ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ 1060 N.Allen Ave. Pasadena .ca 91104
 Արձանագրութեան Վաճառ Դիմել՝
 Տիկ. Արմինէ Լաչինեանին Վեռ. 626-372-4662
 Պր. Յարութ Տրվիչօղլեանին Վեռ. 323-351-8001

ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆ
 Տէր եւ Տիկ. Ժիրայր (Ժիրօ) եւ Լուսին Փոլատեաններու (Ֆրանսա) առջինեկ մանչ զաւակով բախտաւորուելուն առիթով, զոր անուանած են Տարօն Տէր եւ Տիկ. Վիգէն եւ Սալբի Մանկրեաններ իրենց շնորհաւորութիւնները կը յայտնեն ընտանեկան պարագաներուն:

Director of Fellowship Ministry Position
 "St. Gregory Armenian Church of Pasadena is looking for applicants for a full-time position as Director of Fellowship Ministry. It requires organizing committees and teams of volunteers to plan, develop and execute parish activities. For more information, please call the parish office at 626-449-1523."



«ԼԵՍԹԵՐՆ» ՈՒ ՄԻ ՇԱՐՔ ԱԿՈՒՄԲԵՆԻ ԴԵՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆՈՎ

Ֆուտպոլի Հայաստանի ազգային հաւաքականի եւ մակեդոնական «Վարդարի» պաշտպան Յովհաննէս Համբարձումեանը կարող է կարիերան շարունակել Անգլիայի Պրեմիեր լիգայում:




The Sun-ի համաձայն՝ 26-ամեայ ֆուտպոլիստի ծառայութիւններով հետաքրքրուած են Անգլիայի նորընծայ ախոյեան «Լեսթերը», «Վեստ Բրոմվիչը» եւ լիվերպոլեան «Էվերտոնը»: «Վեստ Բրոմվիչը» պատրաստ է 600 հազար ֆունտ ստերլինգ վճարել Համբարձումեանին ձեռք բերելու համար:

«Յաջորդ քայլս Պրեմիեր լիգան է: Գիտեմ, որ դա քայլ առաջ է ինձ համար եւ պատրաստ եմ նոր մարտահրաւէրի: Հենրիխ Միխայիլեանը ցուցադրել է, թէ ինչ որակեալ ֆուտպոլիստներ կան Հայաստանում: Նրա խաղի շնորհիւ Հայաստանի հաւաքականի միւս խաղացողները եւս յայտնուեցին ուշադրութեան կեդրոնում», - նշել է Յովհաննէս Համբարձումեանը:

Աղբիւրը նշում է, որ հայ պաշտպանի ծառայութիւններով հետաքրքրուած են նաեւ բելգիական «Բրիւզես» ու «Անդերլեխտը» եւ ուսական մի քանի ակումբներ:

ԵՈՒՐԱ ՄՈՎՍԻՍԵԱՆՆԵՐ՝ «ՆԻՒ ԵՈՐՔ ՍԻԹԻԻ» ՂԷՄ ԽԱՂԻ ԼԱՎԱԳՈՅՆ ՖՈՒՏԱՊՈԼԻՍՏ

«Ռէյալ Սոլթ Լէյքս» յարձակուող Եուրա Մովսիսեանին ճանաչել է «Նիւ Եորք Սիթի» ղէմ MLS-ի կանոնաւոր առաջնութեան խաղի լավագոյն ֆուտպոլիստ: Հայաստանի հաւաքականից դուրս մնացած Մովսիսեանը 10 բալլային համակարգով արժանացել է 7.5 միաւորի:



«Մովսիսեանը մասնակցեց 2 կողմի վրէժներ: Առաջին կողմի դրուակում նա ցուցադրեց իր ուժն ու վարպետութիւնը եւ խփեց զեղեցիկ կոլ: Եուրան թիմին իր յետեւից տարաւ իր ակտիւ գործողութիւններով», - Մովսիսեանի մասին գրում է կայքը:

Յիշեցնենք, որ MLS-ի կայքը Մովսիսեանին ընդգրկել էր սուրբի խորհրդանշական հաւաքականը: «Նիւ Եորք Սիթի» ղէմ արտագնայ խաղում նա դարձել էր կոլի հեղինակ՝ իր թիմին օգնելով տանել կամային յաղթանակ (3:2): Ընթացիկ առաջնութիւնում Եուրան խփել է 4 կոլ:

ԴԵՆՐԻԽ ՄԻՍԻՔԱՐԵԱՆՆԵՐ ՂԻՋԵԼ Է ՄԻԱՅՆ ՕՐԱՄԵԵԱՆՈՎԻՆ ՈՒ ԼԵԱՆՂՈՎԱԿՈՆ

Դորտմունդի «Բորուսիայի կիսապաշտպան Հենրիխ Միխայիլեանը Գերմանիայի ֆուտպոլիստի միութեան վարկածով ճանաչուել է Բունդեսլիգայի այս մրցաշրջանի երրորդ լավագոյն ֆուտպոլիստ:

Հայաստանի հաւաքականի աւագը ստացել է ձայներ 12,6 տոկոսը: Մրցաշրջանի լավագոյն ֆուտպոլիստ է ճանաչուել Միխայիլեանի ակումբակից Պլեյր-Էմերիկ Օբամեկանգը, որը հաւաքել է 19.7 տոկոս ձայն: Երկրորդ տեղում Միլիտանի «Բաւարիայի» լեհ յարձակուող Ռոբերտ Լեանդովսկին է՝ 19.5 տոկոս ձայն:

Գերմանիայի աւարտուած առաջնութիւնում Հենրիխը մասնակցել է 31 խաղի եւ դարձել 11 գոլի ու 18 գոլային փոխանցման հեղինակ: Աւելի վաղ նրան մրցաշրջանի լավագոյն խաղացող էին ճանաչել Բունդեսլիգայի ֆուտպոլիստները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՒԱՔԱԿԱՆԸ 110-ՐԴՆ Է

Ֆուտպոլի Հայաստանի ազգային հաւաքականը ՖԻՖԱ-ի դասակարգման աղիւսակում պահպանել է դիրքը եւ շարունակում է մնալ 110-րդ տեղում: Նախորդ հրապարակումից յետոյ Հայաստանի թիմն ընկերական խաղերում յաղթել էր Գվատեմալային (7:1) եւ էլ Սալվադորին (4:0), բայց դարձեալ ունի վարկանիշային 316 միաւոր:


Դասակարգման աղիւսակի առաջատարն աշխարհի փոխախոյեան Արգենտինան է, որին յաջորդում է Բելգիան: Չիլին նահանջել է 5-րդ տեղ, Կոլումբիան բարձրացել է երրորդ տեղ, իսկ աշխարհի ախոյեան Գերմանիան՝ չորրորդ: Լավագոյն տասնեակում են նաեւ՝ Սպանիան, Պրագիլիան, Պորտուգալիան, Ուրուգուայն ու Աւստրիան:

Աշխարհի 2018թ. առաջնութեան ընտրական փուլում Հայաստանի հաւաքականի մրցակիցներին Ռուսիան 22-րդն է, Լեհաստանը՝ 27-րդն է, Դանիան՝ 38-րդն է, Չեռնոգորիան՝ 90-րդը, իսկ Ղազախստանը՝ 112-րդը:

Յիշեցնենք, որ մինչեւ ամերիկեան հաւաքի խաղերը Հայաստանի հաւաքականը յաղթանակ չէր տարել 14 հանդիպում անընդմէջ՝ սահմանելով թիմի պատմութեան հակառակորդ:

ՄԱՐԱՑԱԻ ԼԵԳԵՆԴԱՐ ՄՈՒԴԱՍԵՂ ԱԼԻՆ

Ամերիկացի լեգենդար բռնցքամարտիկ Մուհամէդ Ալին Յունիսի 3-ին մահացել է 74 տարեկան հասակում:



Օլիմպիական ախոյեանը նախօրէին ԱՄՆ-ի Արիզոնա նահանգի Ֆինիքս քաղաքում հոսպիտալացուել էր շնչառական համակարգի խնդիրների պատճառով: Այդ ախտորոշմամբ նա առաջին անգամ չէր յայտնուում հիւանդանոցում: 2014 թուականին պրոֆեսիոնալ բռնցքամարտի աշխարհի նախկին բացարձակ ախոյեանը հոսպիտալացուել էր թոքաբորբի պատճառով:

Մուհամէդ Ալին երկար տարիներ տառապում էր Պարկինսոնի հիւանդութիւնից: Հանրութեան շրջանում նա վերջին անգամ յայտնուել է այս տարուալ Ապրիլին Արիզոնայում տեղի ունեցած բարեգործական երեկոյին ժամանակ:

1960թ. օլիմպիական ախոյեանը, պրոֆեսիոնալ բռնցքամարտի ծանր քաշային կարգի աշխարհի բազմակի ախոյեանը, Փառքի սրահի անդամը համարուում է համաշխարհային բռնցքամարտի ամենավառ աստղը: Մի շարք վարկածներով, նա ճանաչուել է անցած դարի լավագոյն մարզիկ ու բռնցքամարտիկ:

Մօտ 20-ամեայ կարիերայի ընթացքում Ալին յաղթել է 56 մենամարտերում (37 նոկաուտ):

ՍԵՂԱ ԹՈՒԹԻՍԱԼԵԱՆԸ՝ ԵՐՈՊԱՅԻ ԱՆՈՅԵԱՆ

Գիւմրեցի Սեղա Թութիսալեանը սպորտային մարմնամարզութեան կանանց Ռուսաստանի հաւաքականի կազմում դարձել է Եւրոպայի ախոյեան:




Շուէյցարիայի մայրաքաղաք Բեռնում կայացած առաջնութիւնում Ռուսաստանի հաւաքականը թիմային 175,212 միաւորով արժանացել է ոսկէ մետալի: Երկրորդ տեղում Մեծ Բրիտանիան է (170,312), իսկ լավագոյն եռեակը եզրափակել է Ֆրանսան (168,496):

16-ամեայ Սեղա Թութիսալեանը 2015թ. պատանեկան օլիմպիական ախոյեան է: Նա սամբոյի աշխարհի եւ ԽՍՀՄ-ի եռակի ախոյեան Գուրգէն Թութիսալեանի դուստրն է:

Սեղան Մոսկուայում 7 տարեկանից է սկսել մարզուել սպորտային մարմնամարզութեամբ: Նա Ռուսաստանի հաւաքականի կազմում ոսկէ մետալ էր նուաճել նաեւ Պաքում կայացած Եւրոպական մարզական խաղերում:

ԱՐԹՈՒՐ ԴԱԻԹԵԱՆ. «ՅՈՅՍ ՈՒՆԵՄ ԿԸ ԿԱՐՈՂԱՆԱՄ ԿԱՏԱՐԵԱԼ ԱՆԵԼ ԿԱՐԺՈՒԹԻՒՆՍ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒՄ»

Եւրոպայի առաջնութիւնն ինձ համար մեծ փորձ էր օլիմպիական բարդացուած ցատկա կատարելու համար, ասել է Եւրոպայի փոխախոյեան Արթուր Դալթեանը, փոխանցում է NEWS.am Sport-ի թղթակիցը:



Արթուր Դալթեանը Ռիօ-2016-ի Հայաստանի «յոյսերից» մէկն է: Հենացատկում փայլող մարմնամարզիկը օլիմպիական ուղեգիրը նուաճեց օլիմպիական փորձամրցման ժամանակ, որին մասնակցելու հնարաւորութիւն էր ստացել Գլազգոյում կայացած աշխարհի առաջնութիւնում:

«Շատ ուրախ եմ, որ այս Եւրոպայի առաջնութիւնից թիմով վերադարձանք 4 մետալով: Իմ մրցելոյցից գոհ եմ, քանի որ կարողացայ իմ բարդ ծրագիրը փորձարկել, եւ արդիւնքը սպասուածից էլ աւելին էր: Լարուածութիւն չունէի Եւրոպայի առաջնութիւնում: Միայն մտած է մարզիչների կողմից: Սա ինձ համար մեծ փորձ էր: Յոյս ունեմ, որ կը կարողանամ կատարել անել վարժութիւնս Օլիմպիական խաղերում», - ասել է Արթուր Դալթեանը:

Եւրոպայի առաջնութիւնում Արթուր Դալթեանը հենացատկում արծաթէ մետալ նուաճեց օլիմպիական բարդացուած ցատկով: